


38085



38085-

ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ


Ե Ի

ԿԱՐԳ ԱՂՕԹԻՅ
ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄՈՒՆ


ՏՊԱՐԱՆ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1934

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ՍՏԱՆԲՈՒԼԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ
ԱՄԵՆ. Տ. Տ. ԹՈՐԳՈՄ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Պատրիարքին Երուսաղեմի



ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻ



ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ



Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի
անունն քո: Եկեցցէ արեայութիւնն քո, եղիցին
կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց
մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ քո՛ղ
մեզ զպարսիս մեր, որպէս եւ մեք թողումք
մերոց պարտապանաց: Եւ մի՛ սանիր զմեզ
ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ:
Ձի քո է արեայութիւնն եւ զօրութիւնն եւ փառք
յաւիտեանս. ամէն:

Ձսաղմոսերգութիւնս և զաղա-
 չանս ընկալցի մարդասէրն Աստուած
 ի հաճոյս բարերար կամաց իւրոց .
 մեր մեղացն և բազում յանցանացն
 թողութիւն շնորհեսցէ . ի չարեաց
 փրկեսցէ . ի մեղաց պահեսցէ . եւ
 նմա փառք յաւիտեանս . ամէն :



Մինչ փահանան շէննոս, 'Իպիրտն էրբէն
 շայս շարական :

Խորհուրդ խորին անհաս անըս-
 կիղբն, որ զարդարեցեր զվերին
 պետութիւնդ . ի յառագաստ անմա-
 տոյց լուսոյն, գերապանծ փառօք
 զգասս հրեղինաց

Անճառահրաշ զօրութեամբ, ըս-
 տեղծեր զԱդամ պատկեր տիրական.

և նազելի փառօք զգեստաւորեցեր .
 ի դրախտն ազենի տեղի բերկրանաց :

Չարչարանօք քո սուրբ միա-
 ծնին, նորոգեցան արարածք ամե-
 նայն . և վերստին մարդն անմահա-
 ցաւ, զարդարեալ ի զգեստ անկո-
 ղոպտելի :

Անձրեւածին բաժակ հրահոսան,
 որ հեղար յառաքեալսն ի սուրբ
 վերնատանն . հեղ և ի մեզ, Հոգիդ
 սուրբ Աստուած . ընդ պատմուճանի
 զքո զիմաստութիւն :

Տան քում վայել է սրբութիւն,
 որ զգեցար զվայելչութիւն . սրբու-
 թիւն փառաց ընդ մէջ քո ածեալ,
 պատեա՛ զմէջս մեր ճշմարտու-
 թեամբ :

Որ զարարչագործ բազուկս քո
 տարածեցեր ընդդէմ աստեղաց .

հաստատեա՛ զբազուկս մեր կարու-
ղութեամբ, համբարձմամբ ձեռաց
առ քեզ միջնորդիլ:

Իկուսմամբ թագ ի գլուխ, պա-
տեսցես զմիտս եւ զգզայարանս.
խաչանիչ ուրարամբ ըստ Ահարով-
նի. ծաղկեալ յոսկեթել ի վարդ խո-
րանի:

Բամից բողոքից տիրապէս աս-
տուած պետական. նափորտապատ
սիրով զմեզ զգեստաւորեցեր, քում՛
սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի
քո անշարժ պահեա՛. և զերկրպա-
գուս անուանդ քում պահեա՛ ի
խաղաղութեան:

Եւ եկեսցեն առաջի սրբոյ Սեղանոյն:

Եւ Քահանան լուսացէ զյետս ասելով.

Սաղմոս. իե. կորդ:

Լուացից սրբութեամբ զձեռս իմ.
և շուրջ եղէց զսեղանով քով, Տէ՛ր:
Դա՛տ արա ինձ, Տէ՛ր, զի ես
յամբժութեան իմում գնացի. ի Տէ՛ր
յուսացայ, զի մի՛ եղէց հիւանդ:

Փորձեա՛ զիս, Տէ՛ր, և քննեա՛
զիս. փորձեա՛ զերիկամունս իմ և
զսիրտ իմ:

Ողորմութիւն քո, Տէ՛ր, առաջի
աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմար-
տութեան քում:

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց.
և ընդ անօրէնս ես ոչ մտից:

Ատեցի ես զժողովս չարաց. եւ
ընդ ամբարիչտս ես ոչ նստայց:

Լուացից սրբութեամբ զձեռս
իմ. և շուրջ եղէց զսեղանով քով,
Տէ՛ր:

Լսել ինձ զձայն օրհնութեան
քո . և պատմել զամենայն սքան-
չելիս քո :

Տէ՛ր , սիրեցի զվայելչութիւն
տան քո . և զտեղի յարկի փառաց
քոց :

Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս
զանձն իմ . և մի՛ ընդ արս արիւնա-
հեղս զկեանս իմ :

Որոց ձեռք իւրեանց յանօրէնու-
թեան են . և աջ նոցա լի է կաշառօք :

Ես յամբժութեան իմում գնացի .
փրկեա՛ զիս , Տէ՛ր , եւ ողորմեա՛
ինձ :

Ոտն իմ կացցէ յուղղութեան .
յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ :

Փառք Հօր և Որդւոյ և Հօգւոյն
Սրբոյ . Այժմ՛ եւ միշտ եւ յաւի-
տեանս յաւիտենից . ամէն :

Քնչն . եւ վասն սրբուհւոյ Աս-
տուածածնին բարեխօսութեանն ,
Տէ՛ր , ընկա՛լ զաղաչանս մեր եւ
կեցո՛ զմեզ :

Սրկէ՛ . Սուրբ զԱստուածածինն և
զամենայն սուրբս բարեխօս արաս-
ցուք առ Հայր ի յերկինս . զի կա-
մեցեալ ողորմեսցի և զթացեալ կե-
ցուցէ զարարածս իւր : Ամենակալ
Տէր Աստուած մեր . կեցո՛ և ողոր-
մեա՛ :

Քնչն . Ընկա՛լ , Տէ՛ր , զաղաչանս
մեր բարեխօսութեամբ սրբուհւոյ
Աստուածածնին անարատ ծնողի
միածնի Որդւոյ քո և աղաչանօք
ամենայն սրբոց քոց : Լուր մեզ ,
Տէ՛ր , և ողորմեա՛ . ներեա՛ քաւեա՛
և թո՛ղ զմեզս մեր : Արժանաւորեա՛
գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ

Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյդ . այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Եւ դարանալով առ ժողովարդն . շարու-
նակէ ստել :

Սոստովանիմ առաջի Աստուծոյ
եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ
առաջի ամենայն սրբոց և առաջի
ձեր , հա՛րք և եղբա՛րք , զամենայն
մեզս զորս գործեալ եմ . քանզի մե-
զայ խորհրդով բանիւ և գործով և
ամենայն մեղօք՝ զոր գործեն մար-
դիկ , մեղայ , մեղայ , աղաչեմ զձեզ ,
խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ
զթողութիւն :

Պարասխանեացեն որդ յերջն են :

Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն

և թողութիւն շնորհեսցէ ամենայն
յանցանաց քոց . անցելոյն և այժ-
մուս և յառաջակայէն փրկեսցէ և
հաստատեսցէ յամենայն գործս բա-
րիս . եւ հանգուսցէ զքեզ ի հան-
դերձեալ կեանսն . ամէն :

Պարասխանեացէ և ինքն :

Ազատեսցէ և զձեզ մարդասէրն
Աստուած , եւ թողցէ զամենայն
յանցանս ձեր . տացէ ժամանակ ա-
պաշխարելոյ եւ գործելոյ զբարիս .
ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս
ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն հզօրն
եւ ողորմածն եւ նմա փառք յա-
ւիտեանս . ամէն :

Դպիրքն : Յիշեսցի՛ր և զմեզ առաջի
անմահ դառին Աստուծոյ :

Քնչն. Յիշեալ լիջիք առաջի անմահ
գառին Աստուծոյ:

Իպիբն. Սաղմոս. 118. 4րէն.

Աղաղակեցէ՛ք առ Տէր ամենայն
երկիր. ծառայեցէ՛ք Տեառն ուրա-
խութեամբ:

Մտէ՛ք առաջի նորա ցնծու-
թեամբ. ծաներուք զի նա է Տէր
Աստուած մեր:

Նա արար զմեզ և ոչ մեք էաք.
մեք ժողովուրդ եւ խաչն արօտի
նորա:

Մտէ՛ք ընդ դրօնս նորա խոս-
տովանութեամբ. եւ օրհնութեամբ
ի յարկս նորա:

Սոստովան եղերո՛ւք Տեառն. և
օրհնեցէ՛ք զանուն նորա:

Իսողոր է Տէր, յաւիտեան է ո-

ղորմութիւն նորա. ազգէ մինչեւ
յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ յաւիտ-
եանս յաւիտենից. ամէն:

Սրկէն. Սուրբ եկեղեցեաւս ա-
ղաչեսցուք զՏէր. զի սովաւ փըր-
կեսցէ զմեզ իմեղաց եւ կեցուսցէ
չնորհիւ ողորմութեան իւրոյ. Ա-
մենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛
ւ ողորմեա՛:

Քնչն. Ի մէջ տաճարիս և առաջի
աստուածընկալ եւ պայծառացեալ
սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս
խոնարհեալ երկիրւղիւ երկիր պա-
գանեմք. զսուրբ եւ զհրաշալի եւ
զյաղթող գտէրութիւնդ քո փառա-
ւորեմք, եւ քեզ մատուցանեմք

զօրհնութիւնն եւ զփառս ընդ Հօր
եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Բահանայն ասասցէ Սաղմոս. իսբ. էցրրդ.
Լ ելցէ ի խորանն:

Մտից առաջի սեղանոյ Աստու-
ծոյ առ Աստուած. որ ուրախ առնէ
զմանկութիւն իմ:

Սրկէն. Դա՛տ արա ինձ, Աս-
տուած. եւ իրաւ արա ինձ ի դա-
տաստանի իմում:

Յազգէ, որ ոչ է սուրբ. ի մար-
դոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա
զիս:

Դու Աստուած հզօրիչ իմ ես.
ընդէ՞ր մոռացար զիս. ընդէ՞ր տըր-

տում զնամ ես ի նեղել թշնամւոյ
իմոյ:

Առաքեա՛, Տէր, զլոյս քո եւ
զճշմարտութիւն քո. զի առաջնոր-
դեսցեն ինձ և հանցեն զիս ի լեռոն
սուրբ և ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստու-
ծոյ առ Աստուած. որ ուրախ առնէ
զմանկութիւն իմ:

Սոստովան եղէց քեզ օրհնու-
թեամբ, Աստուած Աստուած իմ:

Սրգ՝ ընդէ՞ր տրտում ես անձն
իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յու-
սա՛ առ Աստուած? խոստովանեա՛
նմա փրկիչ երեսաց իմոց Աստուած է:
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկէն. Կարող է եւ եւս խաղա-

38085

ղութեան զՏէր աղաչեսցուք: Օրհնեսցուք զհայր Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ և ողորմեա՛ւ:

Քնչն. Ի յարկի սրբութեան և ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս. առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. ըզսուրբ և զհրաշալի և զյաղթող ըզտէրութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք. եւ քեզ ընդ երկնայիս զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ

Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

[Յեր այս աղօթից, ծածկի սեղանն զարաբորաւ. եւ մնայ մնչեա ցաւարոյ ընծայեցն դնելոյ: Եւ դպիրսն երգեն զՍեղեդի ըստ պարզածի առարն, կամ զշարականն խնկարիտեան: Իսկ ելի եպիսկոպոս լինիցի խորհրդածան. ածցել ի վերայ լանջացն զպարոսանն եմբորոնն. եւ մարտեալ առ ընծայարան սեղանոյն. եւ ի ծռանկս անկեալ յորդահոս արդաստուօժ լսառ եւ անհրոտնչ ասացել զաղօթն առ Սուրբ Հոգին րնօրնիչ գործոյն: Գրեգորի Նարեկացոյն ԲԱՆ ԼԳ: Ամենակալ բարերար մարդասէր...:

Սարկաւաքն յայնեացել: Օրհնեա՛ւ Տէ՛ր: Մպիսկոպոսն ի յայն: Զի քո է զթու-

թիւն, եւ կարողութիւն, եւ մար-
դասիրութիւն, զօրութիւն և փառք
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յրէ նախ քան զԵղեղիս

Ընտրեալըդ յԱստուծոյ. ո՛վ եր-
ջանիկ սուրբ քահանայ: Նրմանեալ
Ահարոնի. և Մովսէսի մարգարէին:
Այնմ որ զգեստուցն էր յօրինող, զոր
Ահարոն միշտ զգեոյր: Յօրինէր
զպատմուճանն, զոր ի չորից կազ-
մեալ նիւթոց: Ի կարմրոյ, ի կա-
պուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանոյ: Թեւ
զթելն յօրինէր, կարգն առաջին էր
կարկեհան: Եւ օծուճըն գրապանին,
շուրջանակի բոլորաշէն: Եւ յըն-
թացըս գարշապարին, հընչէր եր-
կիր ցընծայր խորանն: Արդ ի նոյն
նրմանութեան, Քրիստոս ըզմեր

տէրս յօրինէ: Յորժամ մըտցես ի
սուրբ խորանն, անդ յիշեսցես ըզ-
մեր ննջեցեալսն: Յորժամ առնես
զպատարազս. յիշեա և զիս ըզ-
բազմամեզս: Զի և մեզ ողորմեսցի
ի միւսանգամ իւր գալստեանն:

Հօրն փառք՝ Որդւոյն պատիւ,
և սուրբ Հոգւոյն այժմ յաւիտեան.
Յաւիտեանս յաւիտենից. Քրիստոս
օրհնեալ ի համայնից:

Ապա յարոցեալ քայ առ ընծայարան սե-
ղանոյն, առ որ մարոցանէ նախասարկա-
սաքն ընշխարն. զար լառեալ քահանայն
դնէ ի մաղղայն աւելով. Յիշատակ
Տեառն մերոյ. . . : Եւ առեալ զքինին,
արիանէ իաշանիչ ի սկիզն աւելով. Յա-
ղազս յիշատակի. . . : Եւ ասացէ զա-
ղբիս Յովհաննոս Ոսկեբերանին ի ծածուկ:

Տէր Աստուած մեր...: Եւ սոսկեացե
 ասելով. Սաղմոս. յը. Տէր թագաւոր-
 եաց: Եւ խաչակրեացե երեցս ասելով. Հո-
 գին Սուրբ * եկեացէ ի քեզ...: Եւ
 արհանէ շխտանին ասելով. Սուսկ մա-
 տուցանեմ առաջի քո...: Եւ ապա
 քանան զվարագոյրն. Եւ Բահանայն խնկե-
 րով ի Վճ եկեղեցոյն ի ջանէ՛ հանրերջ սար-
 հասագօտն, Եւ ելեալ ի վեր երեցս երկու-
 դագեացե սեղանոյն:

Մ Ե Ղ Ե Դ Ի Բ

Ծագեալարդե

Յիսուս Քրիստոս եմուտ այսօր
 ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ով-
 սաննա երգով:

Յարո՞ւնեան

Ի կոյս վիմէն յարեաւ այսօր և
 զգերեալսն ի գերողէն ազատեաց:

Յարո՞ւնեան

Այսօր մեռեալք ընդ կենդան-
 եացս ձայնեն աւետիս:

Յարո՞ւնեան

Ով պարտիզպան, ասա ո՞ւր տա-
 րան զՅիսուս միաձինն, որ կար-
 ծեմ թէ դու ես նըման:

Մի՛ լար դու ո՞վ կին, ես եմ
 կենդանին, եկ և տես զտեղին, զոր
 խոցեաց ազգն իսրայելին:

Մի՛ լար ցաւազին, յարեաւ կեն-
 դանին, մեռեալն ի խաչին զոր աս-
 տէն գերեզման եղին:

Մի՛ լար Մարիամ, Մագդաղե-

նացի, ես եմ Միաձինն որ յարեայ
ի գերեզմանէն:

Գարձի՛ր եւ գնա, առ սուրբ
Տիրուհին, աւետիս նրմա՝ թէ տեսի
ես զքո Որդին:

Յարո՞ւբեան

Այսօր ողբայլին առ գերեզմա-
նին. Գաբրիէլ գոչէր՝ զի՞ լայք
յարեաւ կենդանին:

Յարեաւ փառաց թագաւորն,
աւետիս. զի՞ խնդրէք զանմահն
ընդ մեռեալս ձեզ մեծ աւետիս:

Ի սմին աւուր այլում գիմաց,
յայտնէ երկուցն կղէովպեանց. ըզ-
վիճմանէ էհարց քրէրէ ըէ ըէ ըրրէ,
ըէ ըէ ըէ ըէ ըրրէ, ըրրէ ըրրէ ըր-
րէրէ ըրրէրէ ըրրէ ըր, ըր ըր ըրրրր

ըրրրէ, ըէրէ ըէրէ ըրրէ ըրրէ ըր,
իստոս:

Առաւելոյ

Այսօր ցընծացէք եղբա՛րք պա-
րակից եղեալ վերնոցն. զՊետրոս և
զՊօղոս գովել. յօրս յիշատակի նո-
ցին:

Ղևոնդեանց

Իսկ ի հեղմանէ արեան ձերոյ հոտ
անոյշ բուրեաց ի յերկինս. և հոտո-
տեցաւ տէր ի հոտ անուշից ընդ կա-
մաւոր պատարագս ձեր. ո՛վ սուրբ
Ղևոնդեանք:



Տ Ա Ղ Ք

Յարութեան

Ի գերեզման յարուցելոյն անմահին, այսօր գոչէր հրեշտակն երկնային, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

Պահապանքըն զարհուրեցան ի յահէն, քանզի ի կոյս ի նօրափոր տապանէն, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

Առ սուրբ վիմին նըստեալ գոչէր հրաշալին, իւզաբերքըն քարոզելով ծաղկէին, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի նօր գերեզմանէն, ի կոյս գերեզմանէն:

Յարութեան

Միաշարաթ օր հանգստեան, կանայք եկին ի գերեզման, եւ ողբային արտասուական, խընդրել զՅիսուս անապական:

Չայնեաց հրեշտակն ուրախական, զայն որ եղին ի գերեզման, ձեզ աւետիս յարեալ փեսայն, դրունք դժօխոց խորտակեցան:

Մարիամանքն ուրախացան, և յԱստուծոյ միշտ գոհացան, առ աշակերտսն անդրէն զարձան, տալ աւետիս վասն յարութեան:

Յարութեան

Յարեալ Աստուածըն հրաշապէս, մեծաւ փառօք աստուածապէս, ձեզ աւետիս ծնունդք Ադամայ,

յաղթեաց առիւծն հզօրապէս :

Այսօր յարեաւ Տէրն փառաց,
որպէս մարգարէն գուշակեաց,
զկապեցեալսն յաւիտենից,
ի մահուանէ զնոսա փրրկեաց :

Չայն աւետեաց ուրախալի,
տայր Գաբրիէլ հրաշալի,
զփող յարութեան հընչեցուցեալ,
աւետիս տայր նոր Սիրովի :

Խաչի

Հաւիկ մի պայծառ տեսի ան-
նըման, ի յայն խաչափայտին վե-
րայ աննման, աննըմանիդ ով նը-
ման, դու նման :

Ձթեւս արծաթափայլս ունէր
աննման, արեգական շողոյն նըման
աննման, աննմանիդ ով նման, դու
նման :

Ձձայնիկն ողորմուկ ածէր ան-
նըման, գաբրիէլեան փողոյն նման
աննման, աննմանիդ ով նման դու
նման :

Ձաչերն արտասուօք լնոյր ան-
նըման, առաւօտեան ցօղոյն նման,
աննման :

Մնորեան

Այսօր տօն է ծնընդեան, աւե-
տիս . տեառն մերոյ և յայտնութեան,
աւետիս : Այսօր արևն արդարու-
թեան, աւետիս, երևեցաւ ի մէջ
մարդկան, աւետիս . այսօր սուրբ
Կոյսն անապական, աւետիս . ծնաւ
երբեր զանմահ արքայն, աւետիս .
այսօր հրեշտակք երկնից իջան, ա-
ւետիս . ընդ մեզ օրհնեն զանմահ
արքայն, աւետիս :

Այսօր դըժողքըն սարսեցան, ա-
ւետիս. գունդըք զիւաց յոյժ սարսե-
ցան, աւետիս: Այսօր չարիքըն կար-
կեցան, աւետիս. եւ ազամեանքն
ուրախացան, աւետիս: Աստղ մի
պայծառ եւ պատուական, աւետիս.
Երեւցաւ ի Հընդըստան. աւետիս:

Ս. Աստուածածնայ

Համեմատ քեզ ոչ գոյ նման,
գովելի ես գովելի,
անեղին մայր եղեր դու կոյս,
նազելի ես նազելի,
մեղաւորաց հաստատուն յոյս,
անձկալի ես անձկալի.
մեր փրկութեան դու ես պատճառ,
խնկելի ես խնկելի,
սերովբէք եւ քերովբէք
զքեզ օրհնեն, սուրբ կոյս

տէրութիւնք եւ պետութիւնք
զքեզ գովեն, սուրբ կոյս,
քեզ նման երանեալ մայր ոչ երկնի,
Քրիստոս Բանն Աստուած
ի քէն ծընաւ սուրբ կոյս:

Մայր անարատ կոյս,
գերազանց կոյս,
գովելի կոյս, գովելի ես.
մայր անարատ կոյս
գերազանց կոյս,
գովելի ես կոյս,
հիանալի կոյս, կոյս,
հիանալի կոյս. կոյս զարմանալի կոյս,
համասփիւռ կոյս,
վարդ նազելի կոյս:
Ամէնօրհնեալ կոյս,
դու երջանիկ լոյս:
Մեղաւորաց յոյս,
լեր բարեխօս կոյս:

Ս. Ասորոսաթաթնայ

Վարանիմք ի մեղաց դու աղա-
տիչ մեղուցելոյս, ով Տիրամայր . ո՛հ
ով Տիրամայր, ո՛հ ցօղեա՛ կաթիլ մի
կուսական զօրեղ կենաց, ո՛հ զօրեղ
կենաց :

Յիմ նախկին վայելմանց ար-
ժանապէս արտաքսեցայ, ո՛հ եղկե-
լոյս, ո՛հ եղկելոյս . ո՛հ փուշ եւ
տատասկ բուսոյց երկիր ողորմե-
լոյս, ո՛հ ողորմելոյս :

Ս. Ասորոսաթաթնայ

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
ծաւալանայր յառաւօտուն,
երկու փայլակնաձևարեգականնման.
չողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս :

Յայտէն նոնենի սարգիատունկ
գեղաշխտակ ծայրից ծաղկանց .
որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն
կարկաջայր սաթբերունի սէր :

Չեռացն եղիչոյ
կամարակապ կապէր .
ատիճաղ պատիճաղ,
ստղի խտղի երգով :

Հիւսէր զելեւսն
ընդ միմեանս,
հանդարտիկ խաղայր,
թիկնեթեկին ճեմէր :

Բերանն երկթերթի,
վարդն ի շրթանց կաթէր,
լեզուին շարժողին
քաղցրերգանայր տաւիղն :

Ի ծամին խեղեփին
հազրէ զի նոյն սէր
հոգիազգեստեալ

գեղն ի գինեոյն գոյն:

Վարսիցն երամից
զարդ՝ երամից զարդ
ոլորս են առեալ
եռահիւսակն բոլորեալ այտիւք:

Ծոցըն լուսափայլ,
կարմիր վարդով լըցեալ.
ծըղիքն ծիրանի
մանուշակի հոյլք:

Խնկեալ ի կընդրկէ
բուրվառ հրով Աճայնով լըցեալ.
ձայն քաղցրանուագ
որ ի նմանէ հնչէր:

Գեղեցիկ պատմուճանաւըն
զարդարեալ էր,
ի կապուտոյ, ի ծիրանուոյ,
ի բեհեզոյ, ի յորդանէ,
ոսկեշողէր գոյնն:

Գօտին արծաթափայլ

ոսկէտտուն, կամարակապ յականց,
յականց շափիւղայ,
մանրամասին յօրինուածով պճնեալ:

Անձին ի շարժել
մարզարտափայլ գեղով.
ոտիցն ի գնալ
շողն ի կաթել առնոյր:

Այն թագաւորին,
այն նորածին փրկչին.
զքեզ պսակողին
փառք յաւլտեանս. ամէն:

Խաչէ

Տիրամայրն հանգէպ որդւոյն ի
խաչին կայր տրտմագին եւ լսելով
զծարաւին, հառաչմամբ լայր ցա-
ւագին ի փուշ պսակ դիտելով ողբ
կոծ վայ տայր իւր անձին. Աչացս

լոյս որդեակ Յիսուս ես ընդ քեզ
մեռանիմ ո՛հ:

Խաչ է

Խաչն ի նախնունն երեւեցաւ,
ծաղկեալ ի դրախտն աստուածա-
տունկ, մխիթարիչ եղեւ Սեթաւ,
նախագուշակ հօրն Ադամայ, մեք
ի յայն փայտն եմք յուսացեալ, յոր
տէր Յիսուս բեւեռեցաւ, և խոնար-
հեալ երկրպագեմք, աստուածընկալ
սուրբ նշանին:

Ի յերկրորդունն երեւեցաւ, խա-
չըն Նոյեայ նահապետին, առեալ
հրաման կազմեալ տապան, օրի-
նակաւ սրբոյ խաչին, մեք ի յայն
փայտն եմք յուսացեալ, յոր տէր
Յիսուս բեւեռեցաւ, եւ խոնար-

հեալ երկրպագեմք, աստուածընկալ
սուրբ նշանին:

Տէառնընդառաջ է

Քրիստոս փառաց թագաւոր,
այսօր եկեալ յընծայումն,
կատարելով նա զօրէնս,
քառանօրեայ գալըստեամբն:

Ձոր մարգարէն Եսայի,
յառաջագոյն գուշակեաց,
յերուսաղէմ քաղաքի,
Սիմէոնի ծերունւոյն:

Աստուածային հրամանաւն,
կայր ձերացեալ ի տաճարն,
ոչ տեսանէր նա ըզմահ,
մինչև տեսցէ նա զօժեալն:

Բարբառ եղև գալըստեան
և ահազին որոտման,

տաճարապետն Քրիստոս,
որ յընծայումն էր եկեալ:

Ի զիրկս առեալ ծերունւոյն
զԱստուածորդին և ասէր .
մեծ աւետիք են այսօր
նահապետաց ամենից,
մեծ աւետիք են այսօր
մարգարէից ամենից,
մեծ աւետիք են այսօր
առաքելոց ամենից,
մեծ աւետիք են այսօր
հայրապետաց ամենից,
մեծ աւետիք են այսօր
մարտիրոսաց ամենից,
մեծ աւետիք են այսօր
ճգնաւորաց ամենից,
մեծ աւետիք են այսօր
վարդապետաց ամենից,

մեծ աւետիք են այսօր
քահանայից ամենից,
մեծ աւետիք են այսօր
սարկաւազաց ամենից,
մեծ աւետիք են այսօր
ժողովրդոց ամենից,
այլ մեծագոյն աւետիք
քրիստոնէից համայնից:

Վարդավառի

Այսօր ցնծայ լեառն Թաբոր և
զուարճանայ մեծըն Հերմոն, քան-
զլի լոյսըն աստուածային, այսօր
ծագեաց այն սուրբ լերինն, այ
ցնծայ այ ցնծայ, ցնծայ, ցնծայ
լեառնն Թաբոր և զուարճանայ:

Այսօր Թաբոր լեառն ուռճա-
ցեալ, լուսատեսիլ ծաղկամբ լցեալ,
քանզլի Յիսուս մարմնով ծաղկեալ,

զադամային փառսն ցուցեալ, այ
ցնծայ, ցնծայ, ցնծայ լեառն Թա-
բոր և զուարճանայ:

Հայրապետաց

Ի հանդէս տօնի ձեր րախացեալ
ցընծամք, հարք եւ վարդապետք
եկեղեցւոյ մանկունք: Արեամբ Գը-
րխատօսի փրկեալ մաքուր ժողովք,
պար առեալ հրճուիմք յօր կատար-
ման ձերոյ:

Որ սիրով սրտի, հարայք ի սէր
Փրկչին, փոխանակ ձեր հեղէք զա-
րիւն արեան նորա: Զորդիս հաւա-
տոյ զձեօք ծնեալ մանկունք, նախ
ընծայեցիք անօրինաց սրով:

Հայրապետաց

Հայրապետաց հանուրց ազգին

վարդապետաց ուղիղ բանին,
որ զքեզ Որդի Հօր միածին,
խոստովանիլ մեզ ուսուցին:

Սպասաւորաց սուրբ խորհրդոյն,
յիննեակ դասուց եկեղեցւոյն,
համանմանեաց վերագունից,
փառատրողացն անձանց երից:

Նաեւ նոցունց որք են յերկինս,
հայցմամբն ուղղեա՛ զիս մուկզինս,
որք և վասն իմ քեզ պաղատին,
անտես չառնել զգործըս ձեռին:

Ս. Սրեպանի

Ստեփանոս քաղցրիկ տատրակ,
սուրբ զուարթուն անուն պսակ.
գեղեցկացար անօրինակ,
բայց ներկեցար արեան գունակ.
Տեառն Յիսուսի քաջ նահատակ,

այգևոյ նորին վարդ մանուշակ,
թէպէտ մարմնով սակայն հրեշտակ,
ի Քրիստոսէ առեր պսակ:

Գոչեմք առ քեզ սուրբ նահատակ,
հողանիւթեայ մարմնով հրեշտակ,
մարտիրոս սուրբ և վկայ,
որ քարկոծմամբ կատարեցար.
յորդոր տօնի քո յիշատակ
արեան սրբոյդ հեղման վտակ
առ Տէր լիցի սուրբ պատարագ,
պահել ըզմեզ միշտ անվտանգ:

Շարական խնկարկոթեան: ԳԿ.

Յայս յարկ նուիրանաց ուխտի
Տեառն տաճարիս. ժողովեալքս աս-
տանօր ի խորհուրդ պաշտման պա-
ղատանաց առաջիկայ սուրբ պատա-
րագիս. խնկօք անուշիւք խումբ

առեալ պարեմք ի վերնայարկ սրահս
խորանիս. ուղղութեամբ ընկա՛լ
զաղօթս մեր որպէս բուրումն ա-
նուշահոտ խնկոց, տաշխից և կի-
նամոնաց. և զմատուցողս պահեա՛
սրբութեամբ միշտ եւ հանապազ
քեզ սպասաւորել. բարեխօսու-
թեամբ մօր քո և կուսի. ընկա՛լ
զաղաչանս քոց պաշտօնէից:

Որ գերագոյն քան զերկինս պայ-
ծառացուցեր սուրբ զեկեղեցի ար-
եամբ քով Քրիստոս. և ըստ երկ-
նայնոցն կարգեցեր ի սմա զդասս
առաքելոց եւ մարգարէից, սուրբ
վարդապետաց. այսօր ժողովեալ
դասք քահանայից, սարկաւազաց,
դպրաց և կղերիկոսաց. խունկ մա-
տուցանեմք առաջի քո, Տէ՛ր, յօրի-
նակ ըստ հնումն Զաքարիայ, ըն-

կա՛լ առ ի մէնջ զխնկանուէր մաղ-
թանս, որպէս զպատարագն Աբելի
զՆոյի և զԱբրահամու. բարեխօ-
սուլթեամբ վերին քո զօրացդ, միշտ
անշարժ պահեա՛ զաթոռ Հայկազն-
եայս:

Խնդա՛ յոյժ դուստր լուսոյ մայր
սուրբ կաթուղիկէ մանկամբք քո
Սիոն. զարդարեալ պճնեա՛ց հարսն
պանծալի երկնանման լուսաճեմ
խորան. զի օծեալն Աստուած էնն
ի յէէն անծախապէս ի քեզ միշտ
պատարագի. Հօր ի հաշտութիւն
մեզ ի քաւութիւն բաշխէ զմարմին
և զարիւն իւր սուրբ. վասն իւր
կատարման սուրբ տնօրէնութեան
չնորհէ զթողութիւն կանգնողի տա-
ճարիս:

Չանապական կոյսն Մարիամ
Աստուածածին խոստովանի սուրբ
եկեղեցի. ուստի տուաւ հացն ան-
մահուլթեան եւ բաժակ մեզ ուրա-
խարար. տո՛ւք օրհնութիւն նմա հո-
գեոր երգով:

Եւ նախասարկաւորին ի մէջ եկեղեցոյ

կալով յայնեացէ: Օրհնեա՛ Տէ՛ր:

Եւ Քահանայն ի յայն ասացէ:

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
ամէն:

Եւ սկանին Դպիրն ժամանօր ըստ պար-
շաճի ասորն.

Յարաւիեան

Միածին Որդի և Բանդ Աստուած
և անմահ էութիւն. որ յանձն առեր

մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն և ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար, Քրիստոս Աստուած մեր. մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի Սրբոյ Երրորդութենէն՝ փառաւորակից ընդ Հօր և Սրբոյ Հոգւոյն՝ կեցո՛ զմեզ:

Զարկի և Յինանց

Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Եւ յարարիւն՝ յայնեացէ նախասարկաւան:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛: Օրհնեա՛ Տէ՛ր:

Եւ Քահանայն ասացէ:

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Խաղաղութիւն ✱ ամենեցուն: Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում: ✕ Սրկքն: Աստուծոյ երկրպագեսցուք: Դպիրքն: Առաջի քո Տէր: ✕

Եւ Քահանայն ասացէ է յայն:

Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է, եւ փառքդ անհասանելի: Որոյ ողորմութիւնդ անչափ է, եւ զթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում, նայեա՛ց ի ժողովուրդս քո և ի տաճարս այս սուրբ: Եւ արա՛ ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր. առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Զի քեզ վայել է փառք

իշխանութիւնն և պատիւն . այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Եւ սկանին ասոր դպիրքն Սաղոս և շահան ըսոր պարզածի ասորն .

ՀԱՐԱԿԱՆՔ ԶԱՇՈՒ

Ձարիի և Յինանց

Գովեա Երուսաղէմ զՏէր :
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց , ալէլուիա : Եկայք ժողովուրդք , երգեցէք Տեառն . ալէլուիա : Յարուցելոյն ի մեռելոց . ալէլուիա . Որ զաշխարհս լուսաւորեաց . ալէլուիա :

Յարութեան

ԱԶ . Ձթագաւորն փառաց Քրիստոս . որ վասն մեր մարմնացաւ

ի սրբոյ Կուսէն եւ խաչի համբերելով . միաբանութեամբ երգով բարեբանեսցուք :

Որ զթաղումն երեքօրեայ յանձնէառ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ . միաբանութեամբ երգով բարեբանեսցուք :

Կարողապէս զգրուես զժոխոց խորտակեաց . եկեղեցւոյ իւրում ըզգեցոյց զմեծ վայելչութիւն . միաբանութեամբ երգով բարեբանեսցուք :

ԱԿ . Թագաւորեաց Աստուած ի շերայ հեթանոսաց . և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի . ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք :

Ձգեցաւ տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ . քանզի շիջոյց զխալթոց

մահու խաչիւն իւրով սրբով. ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք:

Յարեաւ Աստուած և տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան. և մանկունք հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին. ժողովուրդք զՔրիստոս բարեբանեցէք:

ԲԶ. Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհներգութիւն որ ի կուսէն մարմնացաւ. հաստատեաց զաշխարհս ի հաւատս անասանելի. փառք նմա այժմ և յաւիտեան:

Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած բանն. և եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց. փառք նմա այժմ և յաւիտեան:

Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն. լուսազարդեաց

զեկեղեցի իւր սուրբ, ի փառս և ի գովեստ անուան իւրոյ. փառք նմա այժմ և յաւիտեան:

ԲԿ. Օրհնութիւն ի բարձունս. տնօրինեցելոյն ի կուսէն թագաւորին մերոյ. ալէլուիա ալէլուիա:

Օրհնութիւն ի բարձունս. անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ. ալէլուիա ալէլուիա:

Օրհնութիւն ի բարձունս. անբաժանելի եւ միասնական սուրբ երրորդութեանն. ալէլուիա ալէլուիա:

ԳԶ. Զթագաւորն Քրիստոս. օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր:

Արարողին երկնի և երկրի. մատուցուք երգով գոհաբանութիւն ամենայն երկիր:

Երրորդութեանն և մի աստուած-
ծութեանն. մատուցուք պատիւ
երկրպագութիւն յաւիտեանս ամէն:

ԳԿ. Լուսով աստուածութեան
քոյ Քրիստոս. լուսաւորեցեր սուրբ
զեկեղեցի. պահեա զսա անշարժ
յաւիտեան:

Տօնէ այսօր Երուսաղէմ՝ հաւա-
տացելոց բազմութեամբ զնաւակա-
տիս սուրբ եկեղեցւոյ. պահեա զսա
անշարժ յաւիտեան:

Բացան դրունք հաւատոյ նոր
Սիոնի: ընդունել զանմահ փեսայդ
յառագաստ. բաշխէ զմարմին քոյ
և զարիւն. պահեա զսա անշարժ
յաւիտեան:

ԴԶ. Թագաւոր Քրիստոս էակից
Հօր և Հոգւոյն. որ վասն մեր մար-

մնացար ի սուրբ Կուսէն. Թագաւոր
փառաց Քրիստոս քեզ փառք:

Որ կամաւոր մահուամբ զմահ
մեռուցեր եւ անապական յարու-
թեամբդ քով նորոգեցեր զաշխար-
հըս. Թագաւոր փառաց Քրիստոս
քեզ փառք:

Որ կենդանարար արեամբդ քով
լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի.
երգեմք քեզ ընդ հրեշտակս ասե-
լով. Թագաւոր փառաց Քրիստոս
քեզ փառք:

ԴԿ. Որ անբաւելի յաղթող զօ-
րութեամբդ. Թագաւոր ես երկնի և
երկրի Քրիստոս Աստուած. օրհնա-
բանեմք զքեզ:

Որ փառակցութեամբ ընդ Հօր
վերօրհնիս յանմահից. և խոնար-

հեալ մարմին զգեցար փառաց թա-
գաւոր. օրհնաբանեմք զքեզ :

Որ կարողապէս զմահ կոխեցեր.
եւ յարուցեալ լուսաւորեցեր սուրբ
զեկեղեցի անմահ էութիւն օրհնա-
բանեմք զքեզ :

Եւ փնջնոտ երգեն. Գահանայն ասա-
ցե շաղջնս ի ծածոսի Տէր Աստուած
մեր՝ կեցո . . . : Եւ ի գառտ որան դարաց.
երկրպագեն արաջի ասելեւեան : Եւ Քա-
հանայն երկրպագելով սեղանոյն ասացե
շաղջնս ի ծածոսի. Տէր Աստուած մեր՝
որ կարգեցեր :

Սարկաւաբն յայնեացե. Օրհնեա՛ տէ՛ր :
Քահանայն ասացե ի յայն : Զի քո է՛
կարողութիւն, և զօրութիւն, եւ
փառք յաւիտեանս. ամէն :

Եւ համբարեացեն շնորհան. և սար-
կաւաբանն գոչեացեն : Պրօսխուամէ :

Եւ ի սարկաւաբաց փ ոմ քարձրացոցանէ
չԱւերարանն ստորք : Եւ դպիրն ըստ խոր-
հըրդոց ասորն երգեն զՅերեսրբեանն :

Մանրեան

Սուրբ Աստուած . Սուրբ և հզօր .
Սուրբ և անմահ . որ յայտնեցար վա-
սըն մեր . ողորմեա՛ մեզ : [Յրէցո՛
հրինեա՛] :

Գալարեան

Սուրբ Աստուած . Սուրբ և հզօր .
Սուրբ և անմահ . որ եկիր և զա-
լոց ես . ողորմեա՛ մեզ :

Յարութեան

Սուրբ Աստուած . Սուրբ և հզօր .
Սուրբ և անմահ . որ յարեար ի մե-
ռելոց . ողորմեա՛ մեզ :

Համբարյման

Սուրբ Աստուած . Սուրբ և հզօր .

Սուրբ և անմահ. որ համբարձար
փառօք առ Հայր. ողորմեա՛ մեզ:

Հոգւոյ քաջութան

Սուրբ Աստուած. Սուրբ և հօր.
Սուրբ և անմահ. որ եկիր և հան-
գեար յառաքեալսն. ողորմեա՛ մեզ:

Վարդավառի.

Սուրբ Աստուած. Սուրբ և հօր.
Սուրբ և անմահ. որ յայտնեցար ի
Թաբոր լերինն. ողորմեա՛ մեզ:

Վերափոխման

Սուրբ Աստուած. Սուրբ և հօր.
Սուրբ և անմահ. որ եկիր ի փո-
խումն մօր քո եւ կուսի. ողորմեա՛
մեզ:

Խաչի

Սուրբ Աստուած. Սուրբ և հօր.
Սուրբ և անմահ. որ խաչեցար վասն
մեր. ողորմեա՛ մեզ:

Ն- Ժամանայն շոք Երեւորքենոյն ա-
սացի. ի ծածոհ: Աստուած սուրբ. . . :

Ն- ի կարարիւ Երեւորքենոյն և աղօթեցն՝
ասրիւսաբն շարողէ.

Նւ եւս խաղաղութեան զՏէր
աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր՝ ողորմեա՛: X

Ասրիւսաբն: Վասն խաղաղութեան
ամենայն աշխարհի. և հաստատու-
թեան սրբոյ եկեղեցւոյ՝ զՏէր ա-
ղաչեսցուք:

Դպիրքն: Տէր՝ ողորմեա՛: X

Ասրիւսաբն: Վասն ամենայն սուրբ
և ուղղափառ եպիսկոպոսաց՝ զՏէր
աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր՝ ողորմեա՛: X

Ասրիւսաբն: Վասն հայրապետին
մերոյ Տեառն [այս առան] կենաց և

փրկութեան հոգւոյ նորին՝ զՏէր
աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւազն: Վասն վարդապե-
տաց, քահանայից, սարկաւազաց,
դպրաց և ամենայն ուխտի մանկանց
եկեղեցւոյ՝ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր՛ ողորմեա՛:

Սարկաւազն: Վասն բարեպաշտ
թագաւորաց և աստուածասէր իշ-
խանաց. զօրավարաց և զօրաց նո-
ցին՝ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէր ողորմեա՛:

Սարկաւազն: Վասն հոգւոցն հան-
գուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ
հաւատով ի Քրիստոս ննջեցին՝ զՏէր
աղաչեսցուք:

Դպիրքն: Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Սարկաւազն: Եւ ևս՝ միաբան վասն

ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ՝
զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն: Տէ՛ր ողորմեա՛:

Սարկաւազն: Զանձինս մեր և ըզ-
միմեանս Տեառն Աստուծոյ ամենա-
կալին յանձն արասցուք:

Դպիրքն: Քեզ Տեառնդ յանձն ե-
ղիցուք:

Սարկաւազն: Ողորմեաց մեզ, Տէր
Աստուած մեր, ըստ մեծի ողորմու-
թեան քում. ասասցուք ամենեքեան
միաբանութեամբ:

Դպիրքն: Տէ՛ր ողորմեա՛. Տէ՛ր ո-
ղորմեա՛. Տէ՛ր ողորմեա՛:

Եւ քահանայն Բաղիարարած ասացէ զս-
ղոյն ի ծածոսի. Տէր Աստուած մեր. . . :

Սարկաւազն յայնեացէ: Օրհնեա՛ տէր:

Քահանայն ասացէ ի Զայն: Զի ո-

զորմած և մարդասէր ես Աստուած
զուրով եւ քեզ վայել է փառք իշխա-
նութիւնն և պատիւ . այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Յեք այսորիկ երկրպագէ սեղանոյն Ժա-
հանայն և եկեալ Բաղժի յասորիճանն : Ե-
սկանին դպիրքն Սաղոսո ըստ խորհրդոյ
ասորն . և ընկերացին շքերս մարգարեա-
կանս և զարագեղականս : Ե-
զկնի ալե-
լտիս . ըստ ցոցանելոյ ընկերցոսածոյն :

ԱԼԷԼՈՒՔ

Զարկի եւ Յինանց

Գովեա՛ Երուսաղէմ զՏէր :

Եւ օրհնեա՛ զԱստուած քո Սիոն :

Զի զօրացոյց զնիրս զբանց քոց ,
և օրհնեաց զորդիս քո ի քեզ :

Ո եզ զսահմանս քո ի խաղաղու-

թիւն , պարարտութեամբ ցորենոյ
լցոյց զքեզ :

Առաքէ զբան իւր յերկիր , վաղ-
վաղ ընթանան պատգամք նորա :

Դնէ զծիւն որպէս զասր , և զմէզ
որպէս փոշի ցանեաց :

Արկանէ զսառն որպէս պատառս ,
առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ :

Առաքէ զբան իւր եւ հալէ ըզ-
նոսս , շնչեսցեն հողմք և զնասցեն
ջուրք :

Պատմէ զբան իւր Յակոբայ ,
զարդարութիւնն եւ զիրաւունս իս-
րայէլի :

Ոչ այսպէս արար ամենայն ազ-
գաց Տէր , եւ զդատաստանս իւր ոչ
յայտնեաց նոցա :

Մեծի պահոց կեանիկեց :

Աղաղակեցէք առ Տէր (յեր . 14) :

Յարութեան

ԱԶ. Դու յարուցեալ զթասցիս ի վերայ Սիոնի, ժամանակ զթալոյ նորա հասեալ է ժամ:

ԱԿ. Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

ԲԶ. Ծափս հարէ՛ք ամենայն հեթանոսք, աղաղակեցէ՛ք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

ԲԿ. Արի՛ Տէր Աստուած իմ ի հրամանս քո՝ զոր պատուիրեցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ:

ԳԶ. Ուրախ եղև Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիոնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:

ԳԿ. Եկա՛յք եւ տեսէ՛ք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խոր-

հըրդով՝ քան զամենայն որդևոց մարդկան:

ԿԶ. Հաճեցար տէր ընդ երկիրքս, և դարձուցեր զգերութիւն Յակորայ:

ԿԷ. Յարեաւ Աստուած՝ և ցըրուեցան ամենայն թշնամիք նորա, փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Եւ յաւարտանն սարկաւանն յայնեացի: Օրթի՛:

Քահանայն դարձի էւ խաչալիւսեացի է վերայ ժողովրդեանն ասելով.

Սաղաղութիւնն ✽ ամենեցուն:

Իդիերն: Եւ ընդ հոգևոյդ քում:

Սարկաւանն: Երկիւղածութեամբ լուարուք:

Սարկաւանն: Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ . . . :

Դպիրքն: Փառք քեզ, տէր Աստուած մեր:

Սարկաւազն: Պրօսխումէ:

Դպիրքն: Ասէ Աստուած:

Եւ սարկաւազն ընթերցոյի զԱւետարանն սորբ: Եւ յասարթմանն ասասցեն ասէնէսէան.

Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Եւ ապա ասեն զՆիկիական դասանունիւնն ի լմն:

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յեութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ՝ լոյս ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և և ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք: Որ յազազս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելագէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին, հոգի և միտ. և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտագէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն. նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թաղաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ի Սուրբ Հոգին

յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս եւ յԱւետարանս, որ էջն ի Յորդանան քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն յրնդհանրական և յառաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց: Ի յարութիւնն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից. և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասենն. էր երբեմն, յորժամ ոչ էր Որդին. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգին. կամ թէ յօչէից եղեն. և կամ յայլմէ հոլթենէ ասեն լինել զՈրդին Ստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին.

և թէ փոփոխելիք են կամ ալլալելիք. զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Սարկաւաքն յայնչոյց: ~~Յորհեա՛ Տէ՛ր:~~
Քահանայն ասացէ [է լուսասորչէն մերմէ ասացեալ:]

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւաքն Գարողէ ի յայն:

Եւ ևս իսղաղութեան զտէր ազանեսցուք:

Գողերքն: Տէ՛ր ողորմեա: _____

Սարկաւաքն: Եւ ևս հաւատով ազանեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն մերմէ

Յիսուսէ Դրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից: Չի արժանի ընդունելու թեան արասցէ, լուրիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց. ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա: Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով և արդարութեամբ վաստակիլ ի գործս բարիս: Չի զողորմութեան զչնորհան իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուցէ և ողորմեսցի:

Իպիբրն: Կեցո՛ Տէր: —

Սարկաւաբն: Չժամ սուրբ պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք:

Իպիբրն: Ծնորհեա Տէր: —

Սարկաւաբն: Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց՝ ի Տեառնէ խնդրեսցուք:

Իպիբրն: Ծնորհեա՛ Տէր: —

Սարկաւաբն: Զքաւութիւն և ըզթողութիւն յանցանաց մերոց՝ ի Տեառնէ խնդրեսցուք:

Իպիբրն: Ծնորհեա՛ Տէր: —

Սարկաւաբն: Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց՝ ի Տեառնէ խնդրեսցուք:

Իպիբրն: Ծնորհեա՛ Տէր: —

Սարկաւաբն: Եւ ևս՝ միաբան վասրն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ՝ զՏէր աղաչեսցուք:

Իպիբրն: Տէ՛ր ողորմեա:

Սարկաւաբն: Զանձինս մեր եւ

զմիմեանս Տեառն Աստուծոյ ամե-
նակալին յանձն արասցուք:

Դպիրքն: Բեզ Տեառնդ յանձն ե-
զիցուք:

Սարկաաֆն Ողորմեա՛ց մեզ, Տէր
Աստուած մեր, ըստ մեծի ողորմու-
թեան քում. ասասցուք ամենեքեան
միաբանութեամբ:

Դպիրքն: Տէ՛ր ողորմեա. Տէ՛ր ո-
ղորմեա. Տէ՛ր ողորմեա:

Մինչ նոյա երգէն. Բահանայն ասասցէ
չաղջնա ի Ժածոսի: Տէր մեր և փրկիչ...:

Սարկաաֆն յայնեացէ: Օրհնեա՛ Տէր:

Բահանայն: Որպէս զի արժանա-
ւորք եզիցուք գոհութեամբ փառա-
ւորել զքեզ ընդ Հօր և Սուրբ
Հոգւոյդ. այժմ և միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն: Խա-
ղազութիւն * ամենեցուն:

Դպիրքն: Եւ ընդ հողւոյդ քում:

Սարկաաֆն: Աստուծոյ երկրպա-
գեսցուք:

Դպիրքն: Առաջի քո Տէր:

Բահանայն ի յայն: Խաղազութեամբ
քով Քրիստոս փրկիչ մեր՝ որ ի վեր
է քան զամենայն միտս և զբանս,
ամրացո՛ զմեզ և աներկիւղ պահեա՛
յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ
ընդ ճշմարիտ երկրպագուս քո՛ որք
հողւով և ճշմարտութեամբ քեզ եր-
կիր պագանեն: Վասնզի ամենասուրբ
Երրորդութեանդ վայել է փառք իշ-
խանութիւն և պատիւ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս. ամէն:

Սարկաաֆն յայնեացէ: Օրհնեա Տէ՛ր:

Բահանայն խաղալնէ է վերայ շողովոր-
պեանն ասելով .

Տէր Աստուած օրհնեսցէ * զա-
մենեսեանդ :

Դպիրքն : Ամէն :

Յետ այսորիկ ելի եպիսկոպոս իցէ՝ ի
բաց հանցի զեմիփորունն

Սարկաւաքն : Մի՛ ոք յերախալից .
մի՛ ոք ի թերահաւատից . և մի՛
ոք յապաշխարողաց , և յանմաք-
րից մերձեսցի յաստուածայինն խոր-
հուրդս :

Դպիրքն : Մարմին տէրունական և
արիւն փրկչական , կայ առաջի .
երկնային զօրութիւնքն յաներե-
ւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ
բարբառով . սուրբ , սուրբ , սուրբ ,
Տէր զօրութեանց :

Սարկաւաքն : Սաղմոս ասացէք

Տեսուն Աստուծոյ մերուժ , զպիրք ,
ձայնիւ քաղցրութեամբ զերգս հո-
գեւորս :

Դպիրքն ասեն զՍրբասացո-ւիւնն ըստ
խորհրդոյ առարն : Եւ ապա ի սարկաւա-
քացն վերաբերիցի սրբազան հացն և ան-
ճահո-ւիւնն բաժանի ի սորբ սեղանն :

ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ

Ծննդեան , Աւետեաց , Վարդաճառի
և Ասորոսաժաճնի :

Բազմութիւնք հրեշտակաց եւ
զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից
ընդ միածին թագաւորին : Որք եր-
գէին եւ ասէին . սա է Որդին Աս-
տուծոյ ամենքեան ասացուք՝ ու-
րախ լերուք երկինք եւ ցնձացեն
հիմունք աշխարհի . զի Աստուածն
յաւիտենական ի յերկրի երեւեցաւ ,

և ընդ մարդկան շրջեցաւ, զի կե-
ցուսցէ զանձինս մեր:

Մեծի Հինգշաբաթի:

Որ վերայ նստիս ի կառս հրա-
նիւթս քառակերպեանս. անճառե-
լի բանդ Աստուած: Այսօր իջեալ
ի յերկնայնոցն վասն քո արարածո-
ցրս. յանձն առեր բազմիլ ընդ ա-
շակերտսն: Եւ սերովբէքն եւ քե-
րովբէքն հիացեալ զարմանային. և
պետութիւնք վերին զօրացն սքան-
չացեալ աղաղակէին ասելով. Սուրբ.
Սուրբ. Սուրբ. Տէր զօրութեանց:

Յինանց եւ Խաչի:

Ո՛վ է որպէս տէր Աստուած մեր.
խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ
և յարեաւ, հաւատարիմ եղեւ յաչ-

խարհի եւ համբարձաւ փառօք:
Եկայք ժողովուրդք զօրհնութիւն
ընդ հրեշտակս երգեսցուք նմա ա-
սելով, սուրբ. սուրբ. սուրբ ես տէր
Աստուած մեր:

Կիրակի. Եկեղեցոյ. Ծաղկաշարի և
Հրեշտակաց:

Հրեշտակային կարգաւորութեամբ
լցեր, Աստուած, զքո սուրբ զեկե-
ղեցի: Հազարք հազարաց հրեշտա-
կապետք կան առաջի քո. եւ բիւրք
բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ,
Տէր. և ի մարդկանէ հաճեցար ըն-
դունիլ զօրհնութիւն: Չայնիւ խոր-
հըրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ,
Տէր զօրութեանց:

Պահոց և Ննջեցելոց :

Վասն յիշատակի հանգուցելոցն .
ընկալ , հայր սուրբ մարդասէր զպա-
տարագս : Եւ համարեա զհոգիս նո-
ցա ի թիւ սրբոց քոց յարքայու-
թեանդ երկնից : Մանաւանդ զի հա-
ւատով մատուցուք զպատարագս .
հաշտեսցի Աստուածութիւնդ և հան-
գուցէ զհոգիս նոցա :

Մարդէրոսաց :

Սրբութիւն սրբոց մեծ ես և ահա-
ւոր : Եւ զինուորութիւնք հրեշտա-
կացն օրհնեն զքեզ և ասեն : Փառք
ի բարձունս Աստուծոյ և յերկիր խա-
ղաղութիւն :

Մարգարէից . Առաւելոց և Հայրապետաց :

Ամենակալ ես Տէր զօրութեանց ,
որ թագաւորդ ես յաւիտենից : Որ
նստիս յերկնից ի յերկինս եւ լոյս
ծագես յարարածս քո : Որ խոնար-
հութեամբ իջեր ի յերկնից քեզ պա-
տարագս մատուցանեմք : Եւ սուրբ
զանունդ քո փառաւորեմք . Տէր որ
պսակիչդ ես քոց սրբոց (այս անուն) :
Վասնզի սոքա են մեզ բարեխօս ,
Տէր ամենակալ , ի քում յարքայու-
թեանդ :

Եւ եթէ հանդիսանոր օր լինի և զսուրբ
Խորհորհրն վերաբերել կափելիս , այս է ա-
բարողութիւնն : Յորժամ Կահանայն ասէ .
Տէր Աստուած օրհնեսցէ զամենես-
եանդ : Եւ սարկաւազն յայն . Սաղ-
մոս ասացէք տեառն Աստուծոյ : Եւ

դպիրքն երգեն շԱՐԲԱՍԱԿՈՒՆԻՆՆ ըստ
խորհրդոյ առաքն հանգնեալ: Մի՛ ոք
յերախայցից, մի՛ ոք ի թերահաւա-
տից: Մարմին տէրունական եւ ա-
րիւն փրկչական: Եւ գան խնկարկելով
ի սորբ խորհորդն:

Սարկաւաքն: Յարեւու եհար զխո-
րան իւր և ինքն որպէս փեսայ, զի
եղանէ յառազաստէ իւրմէ:

Իպիրքն: Եւ ցնծայ նա որպէս
հսկայ յինթանալ զճանապարհս իւր:

Սարկաւաքն: Որք զքրովբէիցն.

Իպիրքն: Խորհրդաբար կերպարա-
նիւմք.

Եւ գան յարեւելից կողմն:

Սարկաւաքն: Ծանապարհ արարէք
այնմիկ որ նստի յերկնից յերկինս
ընդ արեւելս:

Իպիրքն: Եւ կեզանարար երրոր-
դութեանն զերեքսրբեան օրհնու-
թիւնս մատուցանեմք:

Եւ գան ի հարաւաւողմն:

Սարկաւաքն: Ստուած ի հարաւոյ
եկեցցէ. և սուրբն ի Փառան լեռնէ:

Իպիրքն: Զամենայն զկենցաղա-
կանս ի բաց դնելով զգործս:

Եւ գան յաստիճան խորանին. և բար-
յոջ ահասոր խորհրդոյն ասացէ հանրաբ-
րոսիւեմք:

Սարկաւաքն: Համբարձէ՛ք իշխանք
զդրունս ձեր ի վեր. համբարձցին
զրունք յաւիտենից եւ մտցէ թա-
զաւոր փառաց:

Ա պարարագողն ինկարչի և հարցանի .

Քահանայն : Ո՞վ է սա թագաւոր
փառաց , Տէր հզօր զօրութեամբ
լիւրով . Տէր կարող ի պատերազմի :

Գոյիբոն : Որպէս զի զթագաւորն
ամենեցուն ընդունիցիմք :

Սարկաւաբն : Համբարձէ՛ք իշխանք
զգրունս ձեր ի վեր . համբարձցին
զրունք յաւիտենից . եւ մտցէ թա-
գաւոր փառաց :

Քահանայն . Ո՞վ է սա թագաւոր
փառաց , Տէր զօրութեանց :

Գոյիբոն : Եւ զհրեշտակացն հան-
գիսապէս ընծայեալ բերեմք զկարգ :

Սարկաւաբն : Սա՛ ինքն է թագա-
ւոր փառաց :

Ա պարարագողն երկրպագի ահիւ ե-
րողութեամբ՝ և առնու ի յերաց սարկա-

ւաբն և խաւանիւն ի վերայ ժողովրդե-
անն աւելլ :

Քահանայն : Օրհնեալ եկեալ ան-
ուամբ Տեառն :

Գոյիբոն : Ալէլուիա :

Ա օինչ նոսա երբէն Կահանայն խոնար-
հեացի առաջի սրբոյ սեղանոյն և խորհր-
դաբար աղօթեացի ի Ժաթուհի . Ոչ ոք
արժանի է . . . :

Ա ընծայան վերաբերին ի սեղանն ե-
Կահանայն ինկեացի և լուսացի զմարտնս
իւր աւելլ : Լուացից սրբութեամբ :

Սարկաւաբն : Եւ ևս խաղաղու-
թեան զՏէր աղաչեցուք :

Գոյիբոն : Տէր ողորմեա՛ :

Սարկաւաբն : Եւ ևս հաւատով և
սրբութեամբ կացցուք յաղօթս ա-

ուղի սրբոյ սեղանոյս Աստուծոյ
անիւ: Մի՛ խղճիւ և գայթակղու-
թեամբ. մի՛ նենգութեամբ խորա-
մանկութեամբ. մի՛ պատրանօք եւ
խարէութեամբ. մի՛ երկմտութեամբ
եւ մի՛ թերահաւատութեամբ: Այլ
ուղիդ վարուք, պարզ մտօք. միա-
միտ սրտիւ. կատարեալ հաւատով,
լցեալ սիրով լի եւ առաւելեալ ա-
մենայն գործովք բարութեան կաց-
ցուք յաղօթս առաջի սրբոյ սեղա-
նոյս Աստուծոյ. և փացուք զոգոր-
մութեան զշնորհս յաւուր յայանու-
թեան եւ ի միւսանդամ գալստեան
Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի. կեցուսցէ և ողորմեսցի:

Դպիրքն: Կեցո՛՛ Տէր և ողորմեա՛:

Մինչ նո՛ռ երբէն. թահանայն յեռնա-

ճա՞ռ առջիւնցէ ի շա՞ռնի: Տէր Աս-
տուած զօրութեանց. . . :

Սարկաաբն յայնեացէ. Օրհնեա՛ Տէ՛ր:
Բահանայն: Շնորհօք և մարդասի-
րութեամբ Տեառն մերոյ և փրկչին
Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ
Հօր միանգամայն և Հոգւոյդ Սրբոյ
վայել է փառք իշխանութիւն եւ
պատիւ. այժմ և միշտ և յաւիտեա-
նըս յաւիտենից. ամէն: Ոսղաղու-
թիւն ✠ ամենեցուն:

Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաաբն: Աստուծոյ երկրպա-
գեսցուք:

Դպիրքն: Առաջի քո, Տէ՛ր:

Սարկաաբն: Ողջոյն տո՛ւք մի-
մեանց ի համբոյր սրբութեան. եւ
որք ոչ էք կարողք հաղորդիլ աս-

տուածային խորհրդոյս, առ դրու-
նըս ելէ՛ք և աղօթեցէք:

Իպէրէն: —

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ Ինն Աստուած աստբազմեցաւ .

Սաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունիս հրաման տուաւ .

Եկեղեցիս մի անձն եղեւ,

Համբոյրս յօդ լըրման տուաւ .

Թշնամութիւնըն հեռացաւ,

Սէրն յընդհանուրըս սփռեցաւ:

Արդ պաշտօնեայք բարձեալ ըզ-
[ձայն,

Տո՛ւք օրհնութիւն ի մի բերան,

Միասնական Աստուածութեանն,

Որում սրովբէքն են սրբաբան:

Ո՛հան, և զայս ասեն ի հանդիսի որձնի:

Սարկաւաքն:

Որք հաւատով կայք յանդիման

Սուրբ Սեղանոյս արքայական,
Տեսէք բազմեալ զՔրիստոս ար-

[քայն,

եւ շուրջ պատեալ զօրք վերնա-
[կան:

Իպէրէն:

Վեր համբառնամք զաչս ունելով,

եւ պաղատիմք զայս ասելով,

Ըզմեղըս մեր մի՛ յիշեսցես

Այլ գթութեամբ քօ քաւեսցես:

Ընդ հրեշտակացն օրհնեմք զքեզ,

եւ ընդ սրբոց քոց Տէր փառք քեզ:

Եւ համբոյրեսցեն զեղանն և զժօեանս:

Սարկաւաքն: Ահիւ կացցուք, եր-

կիւղիւ կացցուք, բարևոք կացցուք .

և նայեցարուք զգուշութեամբ:

Իպէրէն: Առ քեզ Աստուած:

Սարկաւաքն: Պատարագ Քրիստոս

մատչի գառն Աստուծոյ:

X Դպիրքն: Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան:

Սարկաւազն: Օրհնեա՛ Տէր:

Քահանայն: Շնորհք, սէր եւ ստուածային սրբարար զօրութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. եղիցի ընդ ձեզ * ընդ ամենեսեանդ:

Դպիրքն: Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւազն: Զգրուես, զգրուես. ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիրդիւ:

Դպիրքն: Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

Սարկաւազն: Եւ գոհացարուք ըզՏեառնէ բոլորով սրտիւ:

Դպիրքն: Արժան և իրաւ:

Իսկ ի հանդիսի առաւ, սմանդ զինի Արժան և իրաւին ասէն շայն:

Սարկաւազն: Եւ զստոյգ փրկութեան. որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութիւն մատուցանեմք քեզ Բրիտոս: Որով եւ զհրաշալի զյարութիւնդ քո գովեն զօրութիւնք: Սարսին սերովբէքն. դողան քերովբէքն. և իշխանութիւնք վերին պետութեանցն պար առեալ քաղցր ձայնիւ եղանակէն և ասեն:

Մինչ նստա երգեն. Կահանայն յեւնաւաճ աղջիւեացի ի Զաճոռի. Արժան է ստուգապէս . . . :

Սարկաւազն յայեացի. Օրհնեա՛ Տէր:

Քահանայն: Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս. և հա-

մարձակապէս դոչելով աղաղակել ընդ նոսին և ասել:

Իպէրէն: Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս: Օրհնեալ որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն. Ովսաննա՛ ի բարձունս:

Մինչ նո՛րա երգեն. Գահանայն Բաղնարատ աղջիկեացէ ի ծածոսի. Սուրբ, Սուրբ, Սուրբ ես ճշմարտապէս...:

Սարկաաբն յայնեացէ. Օրհնեա՛ Տէր՛:

Գահանայն: Առէ՛ք, կերէ՛ք այ՛ս է ՄԱՐՄԻՆ ԻՄ, որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քառութիւն և ի թուղութիւն մեղաց:

Իպէրէն: Ամէն:

Գահանայն ի ծածոսի: Նոյնպէս և...:

Սարկաաբն յայնեացէ. Օրհնեա՛ Տէր՛:

Գահանայն: Սրբէք ի սմանէ ամենեքեան. այս է ԱՐԻԻՆ ԻՄ նորոյ ուխտի. որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի ի քառութիւն և ի թուղութիւն մեղաց:

Իպէրէն: Ամէն: Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասըն մեր պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա աղաչեմք զքեզ՝ ողորմեա՛ քո բանաւոր հօտի:

Գահանայն ի ծածոսի: Եւ զսոյն միշտ իւր յիշատակ...: Եւ առնու զընծայսն ի յերան և սասացէ ի ծածոսի, Եւ արդ մեք Տէր...:

Սարկաաբն յայնեացէ. Օրհնեա՛ Տէր՛:

Գահանայն զընծայսն սակա ինչ Բարյրացոցեալ, մարտոցանէ առ Հայր, և դեղէ ի վերայ սեղանոյն ասելով ի յայն:

Եւ զքոյս ի քոյոց՝ քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:

Ի պէրոն: Յամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք զքեզ, զովեմք ըզքեզ, զոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր:

Մենչ նոռա երբէն. Բահանայն Բաղարաբ առաջե ի ծածոն: Զքեզ արդարեւ Տէր Աժ մեր . . . :

Սարկաւաքն յայնեացէ: Օրհնեա՛ Տէ՛ր: Քահանայն: Սաղազուլթիւնն ✱ ամենեցուն:

Ի պէրոն: Եւ ընդ հողույդ քում:

Սարկաւաքն: Աստուծոյ երկրպագեսցուք:

Ի պէրոն: Առաջի քո՛ Տէ՛ր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս

ի մեզ. հեղմամբ արեան քո սուրբ. աղաչեմք զքեզ՝ ողորմեա՛ արեամբ քով փրկեալ հօտի:

Մենչ նոռա երբէն. Բահանայն խոնարհեալ երկիր պագեցէ սեղանոյն և առաջե ի ծածոն: Երկիր պագանեմք եւ աղաչեմք . . . : Եւ հացեալ սարկաւաքն առնիւր Բահանայն երկիւղեւ և դողալեամբ սեծա: Եւ առաջե ի ցած. Ամեն Օրհնեա Տէր: Եւ Բահանայն խաղաղիսեցէ զընծայան ասելով ի ծածոն: Որով զՀացս օրհնեալ . . . :

Սարկաւաքն յայնեացէ: Օրհնեա՛ Տէր: Քահանայն: Որպէս զի եղիցի սամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն ի քառութիւն և ի թողութիւն մեղաց:

Դպիւրդն : Հողի Աստուծոյ որ
զփառակցի քո զխորհուրդ իջեալ
ի յերկնից կատարես ի ձեռն մեր .
հեղմամբ արեան սորա աղաչեմք
զքեզ՝ հանգո՛ զհողիս մեր նընջե-
ցելոցն :

Աս Բահանայն այսուհետեւ ոչ Բարձրա-
բոյն Բան զընթացն զյերան իւր Գարա-
ծեալ, այլ խոնարհաբոյն, եւ զաշն ի նոյն
յառեալ աղօթեսցի ի Ժաշուի . Սովաւ
չնորհեա՛ զսէր . . . :

Սարկաւաքն յայնեացի : Օրհնեա՛ Տէ՛ր :

Բահանայն : Ընդ որս եւ մեզ այց
արասցես՝ բարերար Աստուած, ա-
ղաչեմք :

Դպիւրդն : Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ :

Բահանայն : Աստուածածնին սըր-

բոյ Կուսին Մարիամու, և Յովհան-
նու մկրտչին, Ստեփանոսի նախա-
վկային, և ամենայն սրբոց՝ եղիցի
յիշատակ ի սուրբ պատարագս՝ ա-
ղաչեմք :

Դպիւրդն : Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ :

Սարկաւաքն յաջակողմն սեղանոյն յե-
նամօ ասացի :

Առաքելոց սրբոց մարգարէից,
վարդապետաց, մարտիրոսաց, եւ
ամենայն հայրապետաց սրբոց, ա-
ռաքելագործ եպիսկոպոսաց, երի-
ցանց, ուղղափառ սարկաւազաց,
եւ ամենայն սրբոց : Եղիցի յիշա-
տակ ի սուրբ պատարագս՝ աղա-
չեմք :

Դպիւրդն : Յիշեա՛ Տէր ողորմեա՛ :

Սարկաւաքն : [Ի Տէրունական աստուծո]

Օրհնեալ գովեալ եւ փառաւոր-

եալ, հրաշալի եւ աստուծազարգ
Տէրութեանն (Յարութեանն) Դրխ-
տոսի երկիր պագանեմք:

Գլխիւն: Փառք Տէրութեան (Յա-
րութեան) քո Տէր:

Սարկաւաքն: [Ի որնի սրբոց]:

Սուրբ և աստուծահաճոյ (մար-
գարէին, հայրապետին, առաքելոյն,
մարտիրոսին [այս անոնն]), զորոյ այս-
օր զյիշատակն կատարեցաք: Ե-
զիցի յիշատակ եւ ի սուրբ պատա-
րագս՝ աղաչեմք:

Գլխիւն: Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Սարկաւաքն: Առաջնորդացն մերոց
եւ առաջին լուսաւորչացն սրբոց,
Թագէոսի և Բարդուղիմէոսի առա-
քելոցն, եւ Գրիգորի լուսաւորչին:
Արխտակիսի, Վրթանիսի, Յուսկա-

նըն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահա-
կայ, Դանիէլի և Խաղայ, Մեսրո-
պայ վարդապետին, և Գրիգորի Նա-
րեկացւոյն, և Ներսիսի Կլայեցւոյն,
Յովհաննու Որոտնեցւոյն, եւ Գրի-
գորի և Մովսիսի Տաթևացեացն, և
սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիս-
եանց, հովուաց և հովուապետացն
Հայաստանեայց: Եզիցի յիշատակ
ի սուրբ պատարագս՝ աղաչեմք:

Գլխիւն: Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Սարկաւաքն: Միանձնացելոց սրբ-
բոց, առաքինասէր և աստուածու-
տոյց կրօնաւորացն, Պօղոսի, Ան-
տօնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրի-
ոսի, արբայ Մարկոսի, Սրապիոնի,
Նեղոսի, Արսենի, Եւագրի, Պար-
սամայ, Յովհաննիսեանց եւ Սի-

մէտնեանց, սրբոց Ոսկեանց և Սու-
քիասանց, և ամենայն սրբոց հարց
եւ աշակերտելոց նոցին ընդ տիե-
զերս: Եղիցի յիշատակ ի սուրբ պա-
տարագս՝ աղաչեմք:

Պաշար: Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Սարկաւաք: Թագաւորաց հաւա-
տացելոց սրբոց, Աբգարու, Կոս-
տանդիանոսի, Տրդատայ, եւ Թէո-
դոսից, և ամենայն սուրբ և բա-
րեպաշտ թագաւորաց և աստուա-
ծասէր իշխանաց: Եղիցի յիշատակ
ի սուրբ պատարագս՝ աղաչեմք:

Պաշար: Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Սարկաւաք: Ընդհանուր ամենայն
հաւատացելոց, արանց և կանանց,
ծերոց և տղայոց, և ամենայն չա-
փու հասակի հաւատով եւ սրբու-
թեամբ ի Քրիստոս ննջեցելոցն:

Եղիցի յիշատակ ի սուրբ պատարա-
գըս՝ աղաչեմք:

Պաշար: Յիշեա՛ Տէ՛ր և ողորմեա՛:

Մինչ նոյա երգեն շարունակ Գանձայն
ասացել զաղօթն ի ծածուկ. շին ի Գանձայն
ասարտեացին Յիշեա՛, Տէր, և ողոր-
մեա . . . :

Սարկաւաք: Յայնեացէ: Օրհնեա՛ Տէ՛ր:

Գանձայն ի յայն: Եւս առաւել
զեպիսկոպոսապետն մեր և զպատ-
ուական հայրապետն ամենայն Հա-
յոց զտէր [այս անան] շնորհեցցես
մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ
զարդապետութեամբ:

Եւ դարձեալ սարկաւաքն գայ ի տե-
ղին եւր և Գանձայն Բարձր:

Գոհութիւն եւ փառաբանութիւն
մատուցանեմք քեզ, Տէր Աստուած

մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս . զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցես : Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն և զըզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի . սրբոյ Եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց . եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն Հայոց տեառն [այս անուն] . և քահանայիս որ զպատարագս մատուցանէ : Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից : Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց : Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց, և շինողաց

սուրբ եկեղեցւոյս, և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ : Ազատութիւն եղբարց մերոց գերելոց եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս : Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն : Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս՝ աղաչեմք :

Մինչ նոսա Կարողէն Կահանայն ասասցէ շարժիս ի Զածուի . Յիշեա Տէր . . . :
Ի պիբի : Ըստ ամենայնի, և յազագս ամենեցուն :

Սարկապն յայնեցի : Օրհնեա՛ Տէ՛ր :
Կահանայն դարչցի և խաչակիւնեցէ և ասասցէ ի յայն :

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ և փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի .

Ընդ ձեզ * ընդ ամենեսեան :

Գլխիդ: Ամէն: Եւ ընդ հոգևոյդ
քում:

Սարկաւոր: Եւ եւս խաղաղու-
թեան զՏէր աղաչեսցուք:

Գլխիդ: Տէր ողորմեա՛:

Սարկաւոր: Ամենայն սրբովք զո-
րըս յիշատակեցաք եւս առաւելա-
պէս. զՏէր աղաչեսցուք:

Գլխիդ: Տէր ողորմեա՛:

Սարկաւոր: Վասն մատուցեալ
սուրբ և աստուածային անմահ պա-
տարագիտ, որ ի վերայ սրբոյ սե-
զանոյս՝ զՏէր աղաչեսցուք:

Գլխիդ: Տէր՝ ողորմեա՛:

Սարկաւոր: Որպէսզի տէր Աս-
տուած մեր որ ընկալաւ զսա ի
սուրբ յերկնային եւ յիմանալի իւր
մատուցարանն. զփոխանակն առա-
քեսցէ առ մեզ զչնորհս եւ զպար-

զեւս Հոգևոյն Սրբոյ. զՏէր աղա-
չեսցուք:

Գլխիդ: Տէր ողորմեա՛:

Սարկաւոր: Ընկալ կեցո՛ եւ ո-
ղորմեա՛ և պահեա՛ զմեզ, Տէր,
քոյին շնորհիւդ:

Գլխիդ: Կեցո՛, Տէր, և ողորմեա՛:

Սարկաւոր: Զամենասրբունի զԱս-
տուածածինն զմիշտ կոյսն Մարիամ՝
հանդերձ ամենայն սրբովք յիշե-
լովք. զՏէր աղաչեսցուք:

Գլխիդ: Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Սարկաւոր: Եւ եւս միաբան վա-
սըն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս
մերոյ՝ զՏէր Աղաչեսցուք:

Գլխիդ: Տէր ողորմեա՛:

Սարկաւոր: Զանձինս մեր և զմի-
մեանս Տեառն Աստուծոյ ամենա-
կալին յանձն արասցուք:

Գլխիբրին: Բեզ Տեառնդ յանձն ե-
ղիցուք:

Սարկաաբն: Ողորմեա՛ց մեզ, Տէր
Աստուած մեր, ըստ մեծի ողոր-
մութեան քում. ասասցուք ամե-
նեքեան միաբանութեամբ:

Գլխիբրին: Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ո-
ղորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛:

Մինչ սարկաաբն Գարողէ. Գահանայն
ասասցէ ի Ժաթոհ: Աստուած ճշմար-
տութեան . . . :

Սարկաաբն յայնեացէ: Օրհնեա՛ Տէ՛ր:
Գահանայն ի յայն: Եւ տո՛ւր մեզ
համարձակածայն բարբառով բանալ
զբերանս մեր կարգալ զքեզ, եր-
կնաւորդ Հայր, երգել և ասել:

Գլխիբրին Բազկարարած եղանակեացեն:

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ
եղիցի անուն քո: Եկեսցէ արքա-

յութիւն քո: Եղիցին կամք քո՝ որ-
պէս յերկինս և յերկրի: Զհաց մեր
հանպազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ
թող մեզ զպարտիւս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապա-
նաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փոր-
ձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ:

Մինչ նոսա երգեն. Գահանայն աղօթեա-
ցէ ի Ժաթոհ: Տէր աէրանց . . . :

Սարկաաբն յայնեացէ: Օրհնեա՛ Տէ՛ր:
Գահանայն ի յայն: Զի քո է արքա-
յութիւն եւ զօրութիւն եւ փառք
յաւիտեանս. ամէն: Սաղաղու-
թիւն ✽ ամենեցուն:

Գլխիբրին: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաաբն: Աստուծոյ երկրպա-
զեսցուք:

Գլխիբրին: Առաջի քո Տէր:

Գահանայն խոնարհեացի, եւ ասենայն

ժողովուրդին ծածր դիցէ. Եւ խնայն աղջկեացէ ի ծածոսի: Որ աղբիւրդ ես . . . :

Սարկաւաքն յայնեացէ: Օրհնեա՛ Տէ՛ր: Քահանայն ի յայն: Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մերով. ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ և Հօր ամենակալի վայել է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ խնայնայն առցէ զսորբ հացն ի յեռն:

Եւ սարկաւաքն յայնեացէ Քարշր:

Պրօսխումէ:

Եւ խնայնայն Քարշրացոցանէ ակներէ ամեայն ժողովրդեանն և ասացէ ի յայն:

Ի Սրբութիւն Սրբոց:

Դպիրքն Քարշր յայնի:

Միայն Սուրբ. միայն Տէր. Յի-

սուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Սարկաւաքն: Օրհնեա՛ Տէ՛ր:

Քահանայն: Օրհնեալ Հայր Սուրբ

Աստուած ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն:

Սարկաւաքն: Օրհնեա՛ Տէ՛ր:

Քահանայն: Օրհնեալ Որդիդ Սուրբ

Աստուած ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն: ✕

Սարկաւաքն: Օրհնեա՛ Տէ՛ր:

Քահանայն: Օրհնեալ Հօգիդ Սուրբ

Աստուած ճշմարիտ:

Դպիրքն: Ամէն: ✕

Սարկաւաքն: Օրհնեա՛ Տէ՛ր:

Քահանայն: Օրհնութիւն և փառք

Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպիքքն: Ամէն: Հայր Սուրբ. Որ-
գիդ Սուրբ. Հոգիդ Սուրբ: Օրհնու-
թիւնն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հո-
գւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեա-
նըս յաւիտենից. ամէն:

Եւ մինչ նոյս երգեն զայս. Բահանայն
խոնարհեացի եւ աղջիկեացի է ծածոսի: Նայ-
եա՛ց Տէր մեր . . . : Եւ զայս ա-
սացեալ երկիր պագեացի եւ համբո՛րեացի
զեղանն: Եւ առեալ զսուրբ Մարտինն
ողջ լեացի յանապական Արիւնն եւ ասա-
ցի է ծածոսի: Տէ՛ր Աստուած մեր որ
կոչեցեր . . . :

Ասրկասաֆն յայնեացի: Օրհնեա՛ Տէ՛ր:
Բահանայն Բարչրացոսացի պիներե ժո-
ղովրդեանն եւ ասացի է յայն:

Ի սուրբ ի սուրբ պատուական
Մարմնոյ եւ յԱրեանէ Տեառն մերոյ

Եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ճա-
շակեսցուք սրբութեամբ. որ իջեալ
ի յերկնից բաշխի ի միջի մերում:
Սա՛ է կեանք, Յոյս, Յարութիւն,
Քաւութիւն, եւ Թողութիւն մեզաց:
Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ
մերում: Սաղմոս ասացէ՛ք երկնա-
ւոր Թագաւորին մերում անմահի,
որ նստի ի կառս քերովբէականս:

Դպիքքն:

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛
Տէր ողորմեա՛ Տէր ողորմեա՛:

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութիւն,
Եւ հիւանդաց բըժշկութիւն,
Ազգիս Հայոց այցելութիւն:

Արի՛ Աստուած հարցըն մերոց
Որ ապաւէնդ ես նեղելոց.

Հաս յօգնութիւն ծառայից քոց
Կէ՛ր օգնական ազգիս Հայոց :

Միջնորդութեամբ սրբոյ խաչին
Եւ անարատ սուրբ ծնողին ,
Յիշեա զհեղումն արեան փրկչին
Ե՛լ ի խնդիր փոքու հօտին :

Արգ անկանիմք առաջի քո
Գոչեմք մեղայ տեսառնրդ մերոյ .
Անցո՛ ի մէնջ զցատումն քո
Վասն անըսպառ զթութեան քո :

Քրիստոս , յարեար ի մեռելոց
Լոյս ծագեցար արարածոց ,
Սուրբ յարութեամբդ քով կենա-
[րար ,
Յարո՛ և զմեզ ի կեանս անմահ :

Տէր ողորմեա՛ Տէր ողորմեա՛ .
Յիսուս փրկիչ , մեզ ողորմեա :

Միջնորդութեամբ սուրբ և ան-
մահ պատարագիս :

Ընկալ՛ , Տէր , և ողորմեա :

Սարկաւաքն յայնեոցէ : Սաղմոս ասա-
ցէ՛ք Տեսան Աստուծոյ մերում ,
Դպի՛րք , ձայնիւ քաղցրութեամբ
զերգս հոգեւորս . զի սմա վայել են
սաղմոսք և օրհնութիւնք , ալէլուք
եւ երգք հոգեւորք : Պաշտօնեայք
հանդերձ երգօք սաղմոս ասացէ՛ք
եւ զՏէր յերկինս օրհնեցէք :

Ն- դպիրքն եղանակեացն :

Օրհնեալ է Աստուած :

Քրիստոս պատարագեալ բաշխի
ի միջի մերում , ալէլուիս :

Չմարմին իւր տայ մեզ կերա-
կուր . և սուրբ զարիւն իւր ցօղէ ի
մեզ . ալէլուիս :

Մատի՛ք առ Տէր, և առէք ըզ-
լոյս. ալէլուիա:

Ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք զի քաղցր
է Տէր. ալէլուիա:

Օրհնեցէ՛ք զՏէր յերկինս. ալէ-
լուիա:

Օրհնեցէ՛ք զնա ի բարձունս. ա-
լէլուիա:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշ-
տակք նորա. ալէլուիա:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրու-
թիւնք նորա. ալէլուիա:

Մինչ նոյա երգին. Կահնայն արցել
զՄարտինն ի յեանն, և հաճոտրեացել ար-
դաստոտ ասելով: Զո՛ր օրհնութիւն...
Դարձեալ ասացել: Խոստովանիմ...
Սքեկեալ արկել ի բաժակն Արեանն. ա-
սելով: Լրումն Հոգւոյն Սրբոյ: Ս-

ապա առեալ զնի մասն ի յեանն. ասացել
արդաստոտ և գոհոտրեա՞ծք առ Հայր և
Որդի. ի ծածոսի: Հա՛յր Սուրբ...
Խաղաղութիւնն ասելնեցանն: Գոհանամ
զքէն... Յովհաննոս Ոսկեբերանին ա-
սացեալ աղօթի. Գոհանամ և մեծա-
ցուցանեմ...: Սքապա պետանաբրեացել
զինքն. և խնորրեացել ի ճշմարտին Աստու-
ծոյ զպետպէս հայցոտածս անյին իւրոյ. և
ժողովրդեանն, և աշխարհի. և Ռոզոտրեանն
խնորրեացել վասն իւրոց լռչնասեացն և ա-
րելեացն: Սքանքին անիւ և դողոտրեա՞ծք
ճաշակեացել ի Մարտինոյն. և արքցել ի Բա-
ժակին, ասելով. Հաւատով հաւա-
տամ...:

Սքապա պետանաբրեացել և յեդ
հաղորելոյն գոզէ առ ժողովուրդն և ասէ
բարձր:

Երկիրը եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

Դպիրքն Բարձր յայն: Աստուած մեր և Տէր մեր երեւեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Եւ առնայն արժանաւորքն հաղորդեցին. և յետ հաղորդելոյն, խահանայն խաչանեցեցեալ զժողովարդն Անթայն և ասացե:

Կեցո՛, Տէ՛ր, զժողովուրդս քո. եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսրմհեաէ մինչև յաւիտեան:

Եւ Դպիրքն երգեցեն:

Լցաք ի բարութեանց քոց, Տէր, ճաշակելով զՄարմին քո և զԱրիւն. փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կերակրես

զմեզ. առաքեա՛ ի մեզ զհոգեւորքս զօրհնութիւն. փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Քահանայն ասացե ի ծածուկ: Գոհանամք զքէն . . . :

Սարկաւաքն ի յայն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեացուք:

Դպիրքն: Տէ՛ր ողորմեա՛:

Սարկաւաքն: Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

Դպիրքն: Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ: Բաշխելով զՄարմին և զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի: Եւ կեանք անձանց մերոց:

Մինչ նոքա երգեն. խահանայն ասացե

է ծածոհի: Գոհանամք զքէն Քրիստոս . . . :

Սարկաւաքն յայնեացէ: Օրհնեա՛ Տէր:

Քահանայն առցէ զԱւետարանն սորքէ ի յեւս իւր: Աւ երէցս երկիր պաշեալ համբարեացէ շտորք սեղանն: Աւ իջանելով ի ժջ եկեղեցոյն ասացէ շաղօքս ի յայն:

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Կեցո՛ զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. զլրումն եկեղեղւոյ քո պահեա՛:

Սրբեա՛ զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ. դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով. եւ մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ:

Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս:

Զի ամենայն տուրք բարիք, և ամենայն պարգևք կատարեալք, ի վերուստ են իջեալք առ ի քէն. որ ես Հայր լուսոյ. եւ քեզ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Գպիրտն ասացեն երէցս:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայամհետէ մինչև յաւիտեան:

Աւ քահանայն դարձցէ աւ ժողովարդն և ասացէ ի յայն:

Կատարումն օրինաց եւ մարգա-

րէից դու ես, Գրիստոս Աստուած
փրկիչ մեր: Որ լցեր զամենայն
Հայրական տնօրէնութիւնս քո: Լի'ց
և զմեզ Հոգւովդ քով Սրբով:

Սարկաւաբն: Օրթի:

Քահանայն: Խաղազութիւն * ա-
մենեցուն:

Կախարհ: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւաբն: Երկիւղածութեամբ
լուարուք:

Քահանայն: Սրբոյ Աւետարանիս
Յիսուսի Գրիստոսի, որ ըստ Յով-
հաննու:

Կախարհ: Փառք քեզ, Տէր Աստ-
ուած մեր:

Սարկաւաբն: Պրօսխումէ:

Կախարհ: Ասէ Աստուած:

Քահանայն: Ի Հօրէ լուսոյ:

Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր

առ Աստուած, և Աստուած էր Բանն.
Նա էր ի սկզբանէ առ Աստուած:

Ամենայն ինչ նովաւ եղև, և ա-
ռանց նորա եղև և ոչինչ որ ինչ
եղևն: Նովաւ կեանք էր, և կեան-
քըն էր լոյս մարդկան, և լոյսն ի
խաւարի անդ լուսաւորէ, և խա-
ւար նմա ոչ եղև հասու:

Եղև այր մի առաքեալ յԱստու-
ծոյ, անուն նմա Յովհաննէս. սա
եկն ի վկայութիւն զի վկայեսցէ
վասն լուսոյն, զի ամենեքին հա-
ւատասցեն նովաւ. ոչ էր նա լոյսն
այլ զի վկայեսցէ վասն լուսոյն:

էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր
առնէ զամենայն մարդ՝ որ գալոց
է յաշխարհ: Յաշխարհի էր, և աշ-
խարհ նովաւ եղև, և աշխարհ զնա
ոչ ծանեաւ:

Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ
 ընկալան. իսկ որք ընկալանն զնա՝
 ետ նոցա իշխանութիւն որդիս Աս-
 տուծոյ լինել, որոց հաւատասցեն
 յանուն նորա. ոչք ոչ յարենէ, եւ
 ոչ ի կամաց մարմնոյ, եւ ոչ ի կա-
 մաց առն, այլ յԱստուծոյ ծնան:

Եւ բանն մարմին եղև, և բնա-
 կեցաւ ի մեզ. եւ տեսաք զփառս
 նորա զփառս իբրև զՄիածնի առ ի
 Հօրէ. լի շնորհօք եւ ճշմարտու-
 թեամբ:

Սարկաւաբն: Փառք քեզ Տէր Աս-
 տուած մեր: Սուրբ խաչիւս աղա-
 չեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ
 զմեզ ի մեղաց և կեցուցէ շնորհիւ
 ողորմութեան իւրոյ. ամենակալ
 Տէր Աստուած մեր, կեցո՛ւ և ողոր-
 մեա՛:

Քահանայն: Պահպանեա՛ զմեզ,
 Քրիստոս Աստուած մեր, ընդ հո-
 վանեաւ սուրբ և պատուական խա-
 չիւզ քո ի խաղաղութեան. փրկեա՛
 յերեկի և յաներևոյթ թշնամւոյն.
 արժանաւորեա՛ գոհութեամբ փա-
 ռաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հո-
 գւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և յա-
 ւիտեանս յաւիտենից. ամէն:

Իպիւրն: Օրհնեցից զՏէր յամե-
 նայն ժամ. յամենայն ժամ օրհնու-
 թիւն նորա ի բերան իմ:

Քահանայն խաչոյնդեպէ զժողովորդն
 և ասացէ քարչր:

Օրհնեալ * եղերուք ի շնորհաց
 Սուրբ Հոգւոյն. երթա՛յք խաղա-
 ղութեամբ և Տէր եղիցի ընդ ձեզ
 ընդ ամենեսեանդ. ամէն:

Պ Ա Շ Տ Օ Ն

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ



Շ Ա Ր Ա Կ Ա Ն Ք

Հ Ա Ն Գ Ս Տ Ե Ա Ն



ԲԿ. Որ յանէից ստեղծող գոյից ,
արարչակից Հօր բանդ Աստուած .
Թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց
ծառայից , յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր :

Որ ի Հօրէ առաքեցար և մար-
մնացար ի սուրբ կուսէն . Թողու-
թիւն շնորհեա ննջեցելոց քոց ծա-
ռայից , յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր :

Որ ի խաչին անշնչացար, զմահու լուծեր զիշխանութիւն. թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Որ պսակիչդ ես քոց սրբոց, և անվախճան բարեաց բաշխող. թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից. յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

ԱԶ. ԳՁ.

ԳՁ. Յահաւոր քո գալստեանն յորժամ գաս տէր ի յերկնից աստուածային քո զօրութեամբ. եւ նշան սուրբ խաչին պայծառանայ ի մէջ երկրի: Նորոգին տարերք երկրի ի ձայնէ հնչման փողոյն որ գոչէ

զկենդանութիւն, ասէ արիք եկն տէր կենդանեաց եւ մեռելոց: Շընորհեա մեզ տէր ողորմութիւն ի ծագել սրբոյ խաչին որով եղև մեզ փրկութիւն. զի նովաւ ելցուք ընդ առաջ աստուածորդւոյդ որ ի յերկնից:

ԱԾ. Սուրբ զաստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք: Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծնեալ փրկիչն ի սրբոյ կուսէն: Ասէ՛ ուրախ լիւր բերկրեալդ, քանզի տէր տերանց է ընդ քեզ:

ԽՁ. Փայտ կենաց որ փոխանակ մահացու պողոյն զքրիստոս պըտղաբերեցեր. պարսպեալ պահեա զուխտս հաւատացելոց: Քեւ բա-

ցաւ մեզ ճանապարհ ծառայն կենաց
ի սրովբէափակ պահպանութենէն.
պարսպեալ պահեա զուխտս հա-
ւատացելոց:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Քեւ ազատեցաւ նախահայրն ի
ճաշակմանէ պտղոյն. եւ քեզ եր-
կրպագեն ամենայն հաւատացեալք
պարսպեալ պահեա զուխտս հաւա-
տացելոց:

Այժմ և յիշող և յաւիտեանս յաւիտենից
ամէն:

Հոգիդ ճշմարիտ մխիթարիչ սը-
զաւորաց. աղաչանօք սուրբ աս-
տուածածնին և ամենայն քոց սրբ-
բոց. յիշեա զհոգիս ննջեցելոց մե-
րոց, և հանգս ընդ սուրբս քո:

Ա. Կ. Գ. Կ.

Գ. Կ. Փառք քեզ Աստուած փառա-
ւորեալ յաւիտեան. որ կենարարդ
ես մարմնոց և զոյացուցիչ հոգւոց
մեր ննջեցելոցն: Որ բարձրացար ի
խաչին վասն Ադամայ նորոգման.
և իջանելով քո ի դժոխս աւար ա-
ռեր զգերեալսն: Զգինս արեան քո
յիշեա կենազործող աշխարհի. եւ
հանգստեան արժանաւորեա՛ յերու-
սաղէմն վերին:

Ա. Մ. Մայր եւ կոյս աղախին
Քրիստոսի որ բարեխօսդ ես միշտ
աշխարհի. քեզ երանեն ամենայն
ազինք: Մաքուր աղաւնի և հարսն
երկնից Մարիամ, տաճար և աթոռ
Աստուծոյ բանին. քեզ երանեն ա-
մենայն ազինք: Քեւ հաճեցան ի-

մանալիքն ընդ հողեղէնքս, և քե
մերձեցաք ի փայտն կենաց. քեզ
երանեն ամենայն ազինք:

ԽՁ. Յաղթող եւ զնոր օրհնու-
թիւն միշտ ի բարձունս երգեսցուք
թագաւորին Քրիստոսի հաւատա-
ցեալ ժողովուրդք: Որ եկն ի լու-
սաւորել զընտրեալ սուրբ զեկեղե-
ցի. և պսակեաց սուրբ խաչիւն նմա
զփառս երգեսցուք:

Փառք հօր և որդւոյ և հոգւոն սբբոյ:

Այսօր և մեք տօնեսցուք զնա-
ւակատիս սուրբ խաչին և փրկողին
մատուցուք փառք եւ պատիւ յա-
ւիտեանս:

Այժմ և մշտ և յաւիտեանս յաւիտենից
ամէն:

Ընդ քերովբէիցն փառաբանու-
թեանց բարեբանեցէք զՀոգին ճշ-
մարիտ. զի հանգուսցէ զննջեցեալ
ծառայս իւր յաւիտենից ի միւսան-
գամ փառաց իւրոյ զալստեանն:

ԲԶ. ՎԶ.

ՎԶ. Որ հայրական իշխանու-
թեամբ եւ փառօք գալոց ես տէր,
նստելոց ես զատաւոր հանդերձ քո
առաքելովք, եւ առնես զհատու-
ցումն քո արարածոց: Որ լուսա-
փայլ ճառագայթիւք նշանաւ սրբոյ
խաչին յահաւոր բեմին բազմիս,
և ընտրես զօգիս յայծեաց և առնես
զհատուցումն քո արարածոց: Արդ
աղաչեմք զքեզ, Քրիստոս Որդի Աս-
տուծոյ, հանգո զմեր ննջեցեալսն
ի վերինդ Երուսաղէմ. զի մի գարձ-

ցի տնանկ ամաչեցեալ ի յաւուրն
ահեղ ատենին:

ԱԾ. Զքեզ օրհնութեամբ մեծա-
ցուցանեմք: Որ զբանն Աստուած
յարգանդի կրեցեր, սրբուհի անա-
րատ, և անճառապէս ծնար զվերա-
ձգողն երկնից. զքեզ օրհնութեամբ
մեծացուցանեմք: Որ էից լուսոյն
արժանի եղեր բառնալոյ ի քո զիրկս
և արեգականն արդարութեան եղեր
արեւելք. զքեզ օրհնութեամբ մե-
ցուցանեմք:

ԽԶ. Զօրութիւն սուրբ խաչի քո
Քրիստոս որ կանգնեցեր ի փրկու-
թիւն աշխարհի. սա պահեսցէ զմեզ
յամենայն փորձութենէ: Քանզի ի
սմա բարձրացար Աստուած, եւ ի
սմա հեղեր զպատուական սուրբ

զարիւնդ. սա պահեսցէ զմեզ յա-
մենայն փորձութենէ:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Եւ զքո միւսանգամ զգալուստդ
նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի.
սա պահեսցէ զմեզ յամենայն փոր-
ձութենէ:

Այժմ և յիշար և յաւիտեանս յաւիտենից
ամէն:

Հոգիդ ճշմարիտ փառակից Հօր և
Որդւոյ. աղաչանօք Աստուածա-
ծնին հանգո զննջեցեալսն մեր ի
սուրբ անունդ քո:

ԲԿ. ԳԿ.

ԳԿ. Որ ի հօրէ առաքեցար, մար-
դասէր կարող փրկիչ, և զմեզ ու-

ցեալ զմարդն բժշկեցեր. ողորմեա տէր հրաժարելոյս զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր: Որ ի խաչին բեւեռեցար, մարդասէր կարող փրկիչ. և զցօղ անապական արեանդ ցօղեցեր տիեզերաց. ողորմեա տէր հրաժարելոյս զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր: Որ զդժոխս աւերեցեր և զգերեալսն փրկեցեր. եւ զարգելեալսն վերածեր ի յոյս կենացն յաւիտենից. ողորմեա տէր հրաժարելոյս զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր:

ԱՅ. Ի քեզ եմք ապաւինեալ, Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ: Որ քան զերկինս բարձրագոյն Մարիամ, պարծանք եկեղեցւոյ. Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ: Որ

քան զարեգակն պայծառագոյն Մարիամ, մի դադարիր բարեխօսել վասն մեր, Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ:

ԽՁ. Խաչի քո Քրիստոս երկընպագեն արարածք ամենայն որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ, սա եղիցի մեզ պահապան յաղթող, ապրեցուցանել զմեզ ի պատրանաց թշնամւոյն: Ի սմա բարձրացար բարձողդ անիծից որ փառաւորեալդ ես ընդ հօր ժողովել զհեռացեալսն կենսաբեր փայտիւն. ապրեցուցանել զմեզ ի պատրանաց թշնամւոյն:

Փառ+ հօր և որդւոյ և հոգւոյն սբբոյ:

Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սմա սպասէին արգել-

եալքն ի մեղսասէր բանտին . որ
ազատեաց զմեզ ի պատրանաց թըշ-
նամուտն :

Այժմ և մշտ և յա-խրեանս յա-խրենից
ամէն :

Ընդ սուրբս քո դասեա եւ ընդ
արդարան պսակեա ի տեղի անկե-
լոց հրեշտակաց զննջեցեալսն մեր
կարգաւորեա . որ ողորմածդ ես
յամենայնի :

ԳԶ .

Գլթա Տէր ի հոգիս մեր ննջեցե-
լոցն և յիշեա ողորմութեամբ . քան
զի զինք սուրբ արեան քո են, ի յոր-
ժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառ-
նեն մեռեալքն և կան առաջի ահա-
ւոր քո բեմին :

Զընկղմեալքս յահազին մեղաց
ծովուս ապրեցո ի գեհենոյն զգա-
ւանողս սուրբ Երրորդութեանդ , ի
յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն
յառնեն մեռեալքն և կան առաջի
ահաւոր քո բեմին :

Զլուսաւորեալքրս ծընընդեամբ
սուրբ աւագանին մի բարկութեամբ
խրատեր , և մի սրտմտութեամբդ
քո յանդիմաներ . ի յորժամ հըրա-
շալի ձայնիւ փողոյն յառնեն մեռ-
եալքն և կան առաջի ահաւոր քո
բեմին :

Ս Ա Ղ Մ Ո Ս Ք

ԱԶ. ԳԶ.

Հաճեցար, տէ՛ր, ընդ երկիր
քո, եւ դարձուցեր զգերութիւն
Յակոբայ:

Թողեր զանիրաւութիւն ժողո՜ւ
վըրդեան քո, և ծածկեցեր զամե՜
նայն մեղս նոցա:

ԱԿ. ԳԿ.

Տէր, լուր աղօթից իմոց, աղա՜
ղակ իմ առ քեզ եկեսցէ, եւ մի՛
դարձուցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խո՜ւ
նարհեցո՛ առ իս զունկն քո, յո՜ւ
րում աւուր կարդամ առ քեզ՝
վաղվաղակի լո՛ւր ինձ:

ԲԶ. ԳԶ.

Մերձեսցին խնդրուածք իմ ա՜
ռաջի քո, Տէր, ըստ բանի քում
իմաստուն արա զիս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո,
Տէր, և բանիւ քո փրկես՛ զիս:

ԲԿ. ԳԿ.

Ի խորոց կարգացի առ քեզ,
Տէր Տէր, լուր ձայնի իմում:

Եղիցին ահանջք քո ի լսել
զձայն աղօթից իմոց:

Ե Ր Գ Ք

Ի վերինն երուսաղէմ,
Ի բնակարանս հրեշտակաց,
Ուր ենովք և եղիաս

Կան ծերացեալ աղաւնակերպ,
 Ի դրախտին եդեմական
 Պայծառացեալ արժանապէս .
 Ողորմած Տէր ողորմեա՛
 Հոգւոցըն մեր ննջեցելոց :

Թագաւոր փառաց Քրիստոս ,
 Որ ժամանեալ զաս ի յերկնից ,
 Ի վերայ թեոց հողմոց՝
 Քո հայրենի կերպարանօք .
 Եւ առնես հրափորձութեամբ
 Զքննութիւն որդւոց մարդկան .
 Ողորմած Տէր ողորմեա՛
 Հոգւոցըն մեր ննջեցելոց :

Ահեղ խորհուրդ քահանային՝
 Բազկատարած կայ ի բեմին .
 Առաջի սուրբ սեղանոյն
 Հուր շիջանի խաւար մերժի .

Տրտմեալ հոգիքն ուրախանան
 Զի թողութիւն մեղաց լինի .
 Ողորմած Տէր ողորմեա՛
 Հոգւոցըն մեր ննջեցելոց :

Ուրախացան ազգըք մարդկան ,
 Յորժամ լըւան զքո յարութիւնդ .
 Նորափետուր զարդարեցան
 Ի յարութեան սուրբ Միածնիդ .
 Ողորմած Տէր ողորմեա՛
 Հոգւոցըն մեր ննջեցելոց :

Մաղխան :

Հոգւոցն հանգուցելոց , Քրիստոս
 Աստուած , արա՛ հանգիտ եւ
 ողորմութիւն , և մեզ մեղաւորացս
 Հնորհեա զթողութիւն յանցանաց :

Քարոջ

Եւ եւս խաղաղութեան զՏէր
 աղաչեսցուք :

Վասն հանգուցեալ հոգւոցն ա-
ղաչեսցուք զՓրկիչն մեր Քրիստոս՝
զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ .
և զմեզ կեցուցէ շնորհիւ ողոր-
մութեան իւրոյ : Ամենակալ Տէր
Աստուած մեր, կեցո և ողորմեա :
Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Տէր ողորմեա :


Առէ՛ք

Քրիստոս Որդի Աստուծոյ, ան-
ոխակալ եւ բարեգութ, զթա՛ քո
արարչական սիրովդ ի հոգիս հան-
գուցեալ ծառայից քոց : Յիշեա յա-
ւուր մեծի զալստեան արքայու-
թեան քո : Արա արժանի ողորմու-
թեան քաւութեան եւ թողութեան
մեղաց : Դասաւորեալ պայծառացո
ընդ սուրբս քո յաջակողման դա-

սուն : Զի դու ես տէր և արարիչ ա-
մենեցուն, դատաւոր կենդանեաց և
մեռելոց : Եւ քեզ վայել է փառք իշ-
խանութիւն և պատիւ . այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս . ամէն :

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ
եղիցի անուն քո : Եկեսցէ արքա-
յութիւն քո : Եղիցին կամք քո որ-
պէս յերկինս և յերկրի : Զհաց մեր
հանապազորդ տո՛ւր մեզ այսօր : Եւ
թող մեզ զպարտիւս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապա-
նաց : Եւ մի՛ տանիր զմեզ ի փոր-
ձութիւն . այլ փրկեա՛ զմեզ ի չարէ :
Զի քո է արքայութիւն և զօրութիւն
և փառք յաւիտեանս . ամէն :



ՀԱՐԿ ԱՂՕՐԻՑ

ՆՒՄԱՆԱԳՍԵՆԻ ԵՄՄՈՒՆ

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



ԿԱՐԳ ԱՂՕԹԻՅ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄՈՒՆ



Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեացէ արեայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկր: Ձեաց մեր հանապազօրց սո՛ւր մեզ այսօր: Եւ քո՛ղ ղեզ զպարսիս մեր, որպէս եւ մեք բողոմք մերոց պարսապանաց: Եւ մի՛՛ սանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Ձի քո է արեայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ԱՌԱՔԵԱ՛, տէր, զլոյս քո եւ
զճմարտութիւն քո, զի առաջնոր-
դեսցեն ինձ, և հանցեն զիս իլեառն
սուրբ և ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ
առ Աստուած, որ ուրախ առնէ ըզ-
մանկութիւն իմ:

Ոոստովան եղէց քեզ օրհնութեամբ,
Աստուած Աստուած իմ:

Արգ՝ ընդէ՞ր արտում ես, անձն իմ,
կամ՝ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛
առ Աստուած, խոստովանեա՛ նմա
փրկիչ երեսաց իմոց Աստուած է:
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ՝
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից, ամէն:

Եւ ևս խաղաչաւիեան զտէր պաշտօնո՛ւ,
ընկալ, կեցո և ողորեա:

Օրհնաւիեան և գառտ հօր և որդւոյ և հո-
գոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից, ամէն:

ԵԿԵՅԷ ի վերայ իմ ողորմու-
թիւն քո, տէր, և փրկութիւն քո
ըստ բանի քում:

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս
բանիւք. զի ես իբանս քո յուսացայ:
Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ
իմմէ զբան ճմարտութեան մինչև
յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ:
Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ,
յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւի-
տենից:

Գնայի ես յանդորրու. զի զպատուի-
րանս քո խնդրեցի:

Ոսուէի զվկայութիւնս քո առաջի
թագաւորաց, և ո՛չ ամաչէի:

Սորհէի... ի պատուիրանս քո զոր
սիրեցի:

Համբարձի զձեռս իմ ի պատուի-
րանս քո՝ զոր սիրեցի, և խորհէի
յարդարութեան քում:

Յիշեա՛ զբան ծառայի քո յոր և յու-
սացուցեր զիս:

Սա մխիթարեսցէ զիս ի խոնարհու-
թեան իմում. զի բան քո կեցոյց
զիս:

Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խո-
տորեցայ:

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից,
տէր, և մխիթարեցայ:

Տրտմութիւն կալաւ զիս ի մեղա-
ւորաց, և ոյք թողին զօրէնս քո:

Գովելի են ինձ իրաւունք քո ի
տեղւոջ պանդխտութեան իմոյ:

Յիշեցի ի զիշերի զանուն քո, տէր,
և պահեցի զօրէնս քո:

Սա եղև ինձ ճանապարհ ի կեանս,
զի զարդարութիւնս քո խնդրեցի:
Չանօրէնս ատեցի և զօրէնս քո սի-
րեցի:

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես
ի բանս քո յուսացայ:

Ի բաց եղերուք յինէն չարք. եւ
քննեցից զպատուիրանս Աստուծոյ
իմոյ:

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, եւ
կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ
զիս ի յուսոյ իմմէ:

Օգնեա՛ ինձ, եւ ապրեցո՛ զիս. եւ
խորհեցայց յիրաւունս քո յամե-
նայն ժամ:

Անարգեցեր զամենեսեան՝ որք ա-
պստամբք եղեն յարդարութեանց

քոց . զի անիրաւութեամբ էին խոր-
հուրդք նոցա :

Յանցաւորս համարեցայ զամենայն
մեղաւորս երկրի . վասն այտորիկ սի-
րեցի զպատուիրանս քո :

Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին
իմ , զի ի դատաստանաց քոց երկ-
եայց յոյժ :

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի
քո , տէր , ըստ բանի քում իմաս-
տուն արա՛ զիս :

Մտցեն աղօթք իմ առաջի քո , տէր ,
և բանիւ քո փրկեա՛ զիս :

Բիշեսցեն շրթունք իմ զօրհնու-
թիւնս քո , յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւնս քո :

Խօսեսցի լեզու իմ զբանս քո , զի
ամենայն պատուիրանք քո արդա-
րութեամբ են :

Եզլացի ձեռն քո ի կեցուցանել զիս ,
զի զպատուիրանս քո ընտրեցի :

Յանկացայ փրկութեան քում , տէր ,
և օրէնք քո խօսք իմ էին :

Կեցցէ անձն իմ , օրհնեսցէ զքեզ .
և իրաւունք քո օգնեսցեն ինձ :

Մոլորեցայ ես որպէս զոչխար կո-
րուսեալ . խնդրեա՛ զծառայս քո , զի
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ :

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամ-
բարտաւանից , և ձեռք մեղաւորաց
մի՛ դողացուցեն զմեզ :

Անդ անկցին ամենեքեան ոյք զոր-
ձեն զանօրէնութիւն , մերժեսցին և
այլ մի՛ կարացեն հաստատիլ :

Ես ի տէր յուսացայ , ցնծացայց
եւ ուրախ եղէց յԱստուած փրկ-
կիչ իմ :

Տէր տէր ետ ինձ զօրութիւն և կա-

ցոյց զոտս իմ ի հաստատութեան .
ի վերայ պարանոցի թշնամւոյն կա-
ցոյց զիս , եւ հանգոյց զիս երագ
երագ :

Որ բնակեալն է յօգնութիւն բար-
ձրելոյն , ընդ հովանեաւ Աստուծոյ
յերկինս հանգիցէ :

Ասասցէ տեառն՝ ընդունող իմ ես .
ապաւէն իմ Աստուած , և ես յու-
սամ ի նա :

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-
ղին , և ի բանից խռովութենէ :

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ .
ի հովանի թեւոց նորա յուսասցիս :
Որպէս գէն շուրջ եղիցի զքեւ ճըշ-
մարտութիւն նորա :

Ոչ երկիցես դու յերկիւզէ գիշերի ,
և ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ :

Յիրէ որ շրջի ի խաւարի , ի գայ-

թակղութենէ զիւրն ի հասարակ ա-
ւուր :

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք
եւ բիւրք ընդ աջմէ քումմէ , որ
առ քեզ ինչ ոչ մերձեսցին :

Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու , եւ զհատուցումն մեղաւորաց
տեսցես . զի դու , տէր , յոյս իմ ես :
Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն . զի ոչ հասցեն առ քեզ չարք ,
և տանջանք մի՛ մերձեսցին ի յար-
կըս քո :

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է
վասն քո , ի պահել զքեզ յամե-
նայն ճանապարհս քո :

Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզ-
քեզ , զի մի՛ երբեք հարցես զքարի
զոտն քո :

Ի վերայ իժից և քարբից գնասցես

դու . և առ ստն կոխեսցես զառիւծն
և զվիշապն :

Քանզի յիս յուսացաւ , և փըրկեցից
զնա . հովանի եղեսց նմա , զի ծան-
եաւ զանուն իմ :

Կարգասցէ առ իս՝ և ես լուայց նմա .
և առ նմա եղէց ի նեղութեան :

Փրկեցից և փառաւոր արարից զնա .
երկայն աւուրբք լցուցից , և ցու-
ցից նմա զփրկութիւն իմ :

Առ քեզ , տէր , հանբարձի զաչս իմ ,
որ բնակեալդ ես ի յերկինս :

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն
իւրոյ . եւ որպէս աչք աղախնոյ ի
ձեռն տիկնոջ իւրոյ :

Այնպէս են աչք մեր առ քեզ , տէր
Աստուած մեր . մինչև ողորմեսցիս
ի վերայ մեր :

Ողորմեա՛ մեզ , տէր , ողորմեա՛ մեզ .

զի բազում լցաք արհամարհանօք :
Եւս առաւել լցան անձինք մեր նա-
խատանօք , որք նախատէլին զմեզ .
և արհամարհանօք ամբարտաւանից :
Աստուած , յանուան քում կեցո՛ զիս ,
և ի զօրութեան քում իրաւ արա՛
ինձ :

Աստուած լուր աղօթից իմոց . ունկն
դիր բանից բերանոյ իմոյ :

Օտարք յարեան ի վերայ իմ . եւ
հզօրք խնդրեցին զանձն իմ , եւ ոչ
համարեցան զքեզ Աստուած առաջի
իւրեանց :

Ահա Աստուած օգնական իմ , և տէր
ընդունող հողւոյ իմոյ :

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս
իմ , ճշմարտութեամբ քով սատա-
կեա՛ զնոսա :

Ես կամօվք իմովք պատարազս մա-

տուցից քեզ . եւ խոստովան եղէց
անուան քում, տէր, զի բարի է :
Յամենայն նեղութենէ իմմէ փրկե-
ցեր զիս, և ի թշնամիս իմ ետես
ակն իմ :

Օրհնեալ ես դու, տէր Աստուած
հարցն մերոց . գովեալ և առաւել
բարձրացեալ յաւիտեան :

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց
քոց . գովեալ և առաւել բարձրա-
ցեալ յաւիտեան :

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբ-
բութեան քոյ . գովեալ և առաւել
բարձրացեալ յաւիտեան :

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ ար-
քայութեան քոյ . գովեալ և առա-
ւել բարձրացեալ յաւիտեան :

Օրհնեալ ես որ նստիս ի քրովբէս և
հայիս յանդունդս, գովեալ և ա-

ռաւել բարձրացեալ յաւիտեան :
Օրհնեալ ես ի վերայ հաստատու-
թեան երկնից . գովեալ և առաւել
բարձրացեալ յաւիտեան :

Օրհնեցէ՛ք զԱստուած ի սրբութեան
նորա . օրհնեցէք զնա ի հաստատու-
թեան՝ ի զօրութեան նորա :

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա .
օրհնեցէք զնա ի բազում մեծու-
թեան նորա :

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան .
օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհ-
նութեամբ :

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, զո-
վեցէք զնա ուրախութեամբ :

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր, զո-
վեցէք զնա ի բարբառ լսելի :

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան .
ամենայն հողիք օրհնեցէք զտէր :

Արդ արձակեա՛ զծառայս քո, տէր,
ըստ բանի քում ի խաղաղութիւն,
զի տեսին աչք իմ զփրկութիւն
քո՝ զոր պատրաստեցեր առաջի ա-
մենայն ժողովրդոց:

Հոյս յայտնեցար հեթանոսաց, եւ
փառք ժողովրդեան քում ի սրայելի:
Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս
աջ քո, և տէր հատուցէ ընդ իմ:
Տէր, ողորմութիւն քո յաւիտեան.
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առ-
ներ:

Տէր, հա՛ն ի բանտէ զանձն իմ. գո-
հանամ զանուանէ քում մէ:

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ
հատուցես:

Մեծացուցէ անձն իմ զտէր, և ցըն-
ծասցէ հոգի իմ Աստուծով փրկի-
չաւ իմով:

Այց արար ի վերայ խոնարհութեան
աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երա-
նիցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և
սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար ազգաց յազգս
երկիւղածաց իւրոց. արար զօրու-
թիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց
սրաից, և քակեաց զհզօրս յաթոռոց:
Ձխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս
ելից բարութեամբ, և զմեծատունս
արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայելի ծառայի
իւրում, յիշելով զողորմութիւն իւր:
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝
ընդ Սբրահամու եւ զաւակի նորա
յաւիտեան:

Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ, կեցո՛

զորդի աղախնոյ քոյ, և արա՛ առ իս
նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն,
զի դու, տէր, օգնեցեր ինձ և մխի-
թարեցեր զիս:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ.
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից, ամէն:

Մաղնահ:

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն
ժամ, և ի սուրբ խաչ քո յուսացեալ
եմ, թագաւո՛ր երկնաւոր. զբազ-
մութիւն սրբոց քոց բարեխօս ու-
նիմ առ քեզ: Որ երկայնամիտդ ես
առ ամենեւեան, մի՛ անտես առ-
ներ զապաւինեալս ի քեզ. այլ պա-
հեա՛ պատուական և սուրբ խաչիւ
քով ի խաղաղութեան:

Քարոյ:

Աղաչեսցուք զամենակալն Աս-
տուած, եւ խնդրեսցուք ի նմանէ
զի առաքեսցէ զհրեշտակ խաղա-
ղութեան, որ եկեալ պահեսցէ ըզ-
մեզ յերկիւղական գիշերիս, ի դի-
ւական խռովութենէ ամբողջ պահե-
լով զհոգի և զմարմին մեր՝ մինչև
ի կատարումն ժամանակի ամաց մե-
րոց: Ամենակալ տէր Աստուած մեր,
կեցո՛ և ողորմեա՛:

Զհանգիստ գիշերիս խաղաղու-
թեամբ անցուցանել՝ հաւատով ի
տեառնէ խնդրեսցուք:

Զհրեշտակ խաղաղութեան պահա-
պան անձանց մերոց ի տեառնէ խըն-
դրեսցուք:

Զքաւութիւն եւ զթողութիւն յան-

ցանաց մերոց ի տեառնէ խնդրես-
ցուք:

Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօ-
րութիւնն յօգնութիւն անձանց մե-
րոց ի տեառնէ խնրեսցուք:

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ
սուրբ հաւատոյս մերոյ՝ զտէր աղա-
չեսցուք:

Զանձինս մեր եւ զմիմեանս տեառն
Աստուծոյ ամենակալին յանձն ա-
րասցուք:

Ողորմեա՛ց մեզ տէր Աստուած մեր,
լստ մեծի ողորմութեան քում. ա-
սասցուք ամենեքեան միաբանու-
թեամբ:

Առ:Բ+:

Տէր Աստուած մեր, դու պահեա՛
զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս

յայմիկ եւ յամենայն ժամանակի:
Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ
պահեա՛ զմիտս եւ զխորհուրդս մեր:
Որպէս զի յամենայն ժամ քե պահ-
պանեալ լիցուք յորոգայթից թշնա-
մւոյն: Եւ քեզ հանցուք զօրհնու-
թիւն եւ զփառս հօր եւ որդւոյ եւ հօ-
գւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Խօսողութիւն ամենեցուն.

Աստուծոյ երկրպագեցում:

Հրեշտակի խաղաղութեան յանձն
արա՛ զանձինս մեր, տէր զօրու-
թեանց. որ եկեալ պահեսցէ զմեզ
անխռովս ի տուէ եւ ի գիշերի՝ յար-
թնութեան եւ ի հանգստեան մերում,
զի դու ես արարիչ լուսոյ, եւ հաս-
տիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք

զքեզ, տէր Աստուած մեր, զհան-
գլիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղու-
թեամբ անցուցանել, եւ հասանել
ի պաշտօն առաւօտու յերկրպագու-
թիւն եւ ի փառաբանութիւն ամե-
նասուրբ Երրորդութեանդ, այժմ՝ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Սաղմոս Գ .

Խաղաղութեամբ յայտ եւ ի սոյն
ննջեսցուք եւ զարթիցուք . զի դու ,
տէր, միայն առանձին յուսով քով
բնակեցուցեր զմեզ :
Ի կարգալ իմում լուար ինձ, Աս-
տուած, ըստ արդարութեան, ի նե-
ղութենէ ինձ անդորր արարեր . ու-
ղորմեա՛ ինձ եւ լո՛ւր աղօթից իմոց :
Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք

խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնան-
րութիւն . եւ խնդրէք զստութիւն :
Ծաներո՛ւք զի սքանչելիս արար
տէր սրբոյ իւրում . եւ տէր լուիցէ
ինձ ի կարգալ իմում առ նա :
Բարկանայք եւ մի՛ մեղանչէք . զոր
ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս
ձեր զզջացարուք :

Մատուցէք պատարագս արդարու-
թեան . եւ յուսացարո՛ւք ի տէր :
Բազումք ասէին թէ ո՛ր ցուցցէ մեզ
զբարութիւն տեսուն . նշանեցաւ առ
մեզ լոյս երեսաց քոյ եւ ետուր ու-
րախութիւն սրտից մերոց :

Ի պաղոյ ցորենոյ զինւոյ եւ ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա :
Խաղաղութեամբ յայտ եւ ի սոյն նըն-
ջեսցուք եւ զարթիցուք . զի դու ,

տէր, միայն առանձին յուսով քով
բնակեցուցեր զմեզ :

Ալիլուիա Օրփի :

Խաղաղութիւն ասեմեցոսն :

Եւ ընդ հոգւոյդ փում :

Երկիւղածութեամբ լուարուք :

Սբօյ աւետարանի Յիսուսի Քրիստոսի՝

որ ըստ Յովնանոս :

Փառք քեզ, քէր Ասուած մեր :

Պատիւսմէ :

Ասէ Ասուած :

Տէրն Վեր Յիսուս Քրիստոս առ :

Ամէն ամէն ասեմ՝ ձեզ, եթէ ոչ
հատն ցորենոյ անկեալ յերկիր մե-
ռանիցի, ինքն միայն կայ. ապա
եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս
առնէ :

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա.
և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս
յայամիկ, ի կեանսն յաւիտենականս
պահեսցէ զնա :

Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ
եկեսցէ. և ուր ենն եմ անդ և պաշ-
տօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս
պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն
իմ :


Քարոյ :

Փառք քեզ քէր Ասուած մեր :

Սուրբ խաչիւս աղաչեսցուք ըզ-
տէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ
ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ
ողորմութեան իւրոյ : Ամենակալ
տէր Աստուած մեր, կեցո՛ւ և ողոր-
մեա՛ :

Աղբիւր :

Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա՛ յերևելի եւ յաներևոյթ թշնամուոյն: Արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Անկանիմ առաջի քո, սուրբ Աստուածածին, և աղաչեմ զանարատ զկոյսդ. բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, և աղաչեա՛ զմիածին որ-

դիդ, փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:



Մաղբանք զօրաւոր՝ տրնաւաց զիւրապնոյ, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ:

ԲԱՆ ԺԲ.

Ի խորոց արցից խօսք ընդ Ասուծոյ:

Ընկալ քաղցրութեամբ, տէր Աստուած հզօր, զգառնացողիս զաղաչանս. մատիր զթութեամբ առ պատկառեալս զիմօք. փարատեա՛, ամենապարզև, զամօթական տխրութիւնս. բա՛րձ յինէն, ողորմած, զամբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛, հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա՛, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բա-

ցատրեա՛, վերնային, զմուխելոյն մա-
ռախուղ . կնքեա՛, կեցուցիչ, զկո-
րուսչին ընթացմունս . ցրուեա՛,
ծածկատես, զմբընողին չար գտ-
մունս . խորտակեա՛, անքնին, ըզ-
մարտողին զիմեցմունս : Տեառնա-
գրեա՛ քո անուամբդ զլուսանցոյց
երդ յարկիս . պարփակեա՛ քո ձե-
ռամբդ զառաստաղ տաճարիս, գծա-
գրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց
սենեկիս . կերպացո զքո նշանդ ի
հետս ելից մաղթողիս . ամրացո՛ քո
աջովդ զհանգստեանս խշտի . մաք-
րեսցես ի հաղբից զծածկարան ան-
կողնոյս . պահեսցես քո կամօքդ
զտառապեալ անձն ողւոյս . ան-
խարդախ արասցես զքո շնորհեալ
չունչ մարմնոյս . կացուսցես շրջա-
փակ զպար զօրուդ երկնայնոյ . կար-

զեսցես ի գիմի ընդդէմ զիւացն դա-
սու : Տո՛ւր հանգիստ բերկրութեան
մահահանգոյնս նիրհման ի խորու-
թեան զիշերիս, բարեխօսութեամբ
հայցուածոց սրբուհւոյ Աստուածա-
ծնիդ և ամենայն ընտրելոց : Ամ-
փոփեալ պարուրեա՛ զպատուհան
տեսութեանց՝ զգայարանացս իմաս-
տից՝ անգարհուրելի զետեղմամբ .
ի ծփական խռովութեանց, կենցա-
ղական զբաղմանց . անըջական երա-
զոց . խօլականաց ցնորից . յիշատա-
կաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտ-
պանեալ : Եւ սթափեալ վերստին
ի ննջմանէ ծանրութեան՝ ամենա-
զգաստ արթնութեամբ, հոգենորոգ
զուարթութեամբ ի քեզ արծանա-
ցեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուր-
մամբ հաւատոց՝ քեզ ամէնօրհնեալ

Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագուժար խմբից երգակցեալ յերկինս սուաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նաբեկացոյ:

Բան ԽԱ.

Ի խորոց սրտից խօսք բնդ Աստուծոյ:

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքնին ծնունդ. որ տկարանայ առ ի քէն և ո՛չ ինչ, որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց՝ հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կա-

պանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն, մեկնի մէզն մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքըն. հալածին յուսահատութիւնքն և թագաւորէ ձեռն քո ամենակար քաւիչդ ամենայնի:

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզնին. ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշ-

խարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս. և քեզ ընդ Հօր և Հօգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նաբեկացոյ:
ԲԱՆ Զ.

Ի խորոց արեւից խօսք՝ ընդ Տրոււսոյն.

Ա. Եւ արդ, ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, աստուածային բարկութեանց, տազնապեալ ոգւով թախժութեան իսպտու, ազաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին: Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր ար-

քայուհի, անխառն իբրև զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան ըզբնակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, եղեմ շնչական, ծառ կենացն անմահից բոցեղէն սրոյն պարունակեալ, ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ Հօգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարգարեալ և տաղաւարեալ, միածինն հօր՝ եւ քեզ անդրանիկ, որդի քո ծննդեամբ և տէր արարչութեամբ, ընդ անաղտ մաքրութեանդ՝ և անբիծ բարի, ընդ անարատ սրբութեանդ՝ եւ խնամակալ բարեսօս: Ընկալ զմաղթանս այսր աղերսա-

նաց՝ քում՝ դաւանողիս, և մատո՛ր
ընծայեա՛ ընդ սմին խառնեալ ըզ-
բանն իմ նախնի՝ մեծիդ ներբո-
ղի՝ ի քոյդ պաղատանս: Հիւսեա՛
միացո զմեղուցելոյս դառն հեծու-
թիւնն ընդ քումդ երջանիկ և խըն-
կաւորեալ հայցուածոց, տունիդ կե-
նաց պտղոյն օրհնութեան. զի ի քէն
միշտ օգնեալ եւ բարեգործեալ, եւ
ի մաքրական քո ծնելութիւնդ ա-
պաւինեալ եւ լուսաւորեալ, կեցից
Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն:

Բ. Օժանդակեա թեոցդ աղօթիւք,
խոստովանեալ մայրդ կենդանեաց,
և ելիցն իմ յերկրէս հովտէ, առանց
լլկանաց հետեւիլ ի կեանս օթեա-
նացդ պատրաստութեան, զի թե-
թեացի կատարածն իմ ինձ՝ ծան-

րացելոյս անօրէնութեամբ: Արաս-
ցես տօն ինձ բերկրութեան՝ զօրն
իմ տագնապի, ողջացուցիչ երկանցն
եւայի. բարեխօսեա՛ խնդրեա աղա-
չեա, զի ըստ անճառելի մաքրու-
թեանդ և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութիւն: Արտասուօք օգ-
նեա վտանգեցելոյս, զովեալդ ի կա-
նայս, ծուներ խոնարհեցո առ իմ
հաշտութիւն՝ ծնողդ Աստուծոյ, ընդ
իմում թշուառիս հօգա՛, խորան
բարձրելոյն, ձեռն տուր անկելոյս,
տաճար երկնային, փառաւորեա
զորդիդ քո ի քեզ, աստուածօրէն
ինձ հրաշագործել քառութիւն և ու-
ղորմութիւն, աղախին Աստուծոյ
եւ մայր, բարձրասցի պատիւ քո
ինեւ, եւ ցուցցի փրկութիւն իմ
քեւ:

Գ. Եթէ զլիս գտցես, տիրամայր,
 թէ ինձ ողորմեսցիս, սրբուհի. թէ
 զկորուսեալս շահեսցիս, անարատ,
 թէ զհարթուցեալս յանձանձեսցես,
 երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ
 մատուցես, բարեշնորհ, թէ յու-
 սահատելոյս ինձ միջնորդեսցես,
 միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս
 ընտանեցուցես, մեծարեալդ Աս-
 տուծոյ, թէ յիս ցուցցես զգթածու-
 թիւն, լուծիչդ անիծից, թէ ըզ-
 ծփեալս հաստատեսցես, հանգիստ,
 թէ ի խռովութեանցս յուզմանց փո-
 խեսցես զլիս, խաղաղարար, թէ վը-
 ըրիպելոյս ինձ հնարաւորեսցես, զո-
 վեալ, թէ վասն իմ մտցես ի հան-
 դէս, մահու նահանջիչ, եթէ ըզ-
 դառնութիւնս իմ անուշեսցես,
 քաղցրութիւն, թէ զբաժանմանն

լիմ խտրոց քակեսցես, հաշտու-
 թիւն, թէ զանմաքրութիւնս իմ
 բարձցես, եղծման ընդոտնիչ, թէ
 զմատնեալս մահու փրկեսցես, կեն-
 դանի լոյս, թէ զլալեացս ձայն հատ-
 ցես, բերկրութիւն, թէ զխորտա-
 կեալս կազուրեսցես, դեղ կենաց,
 թէ ի կործանեալս յիս ակնարկես-
 ցես, հոգելից, թէ ողորմութեամբ
 ինձ պատահեսցես, կտակ նուիրեալ:
 Օրհնեալդ միայն ի շրթունս անբիծս
 լեզուաց երջանկաց. ահա կաթիլ մի
 կաթին քումդ կուսութեան յանձն
 իմ անձրեալ՝ կենաց ինձ զօրէ,
 մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի
 արարչին երկինի և բնաւին երկրի,
 զոր անձառապէս ծնար բովանդակ
 մարմնովն և համայն աստուածու-
 թեամբն, որ փառաւորեալն է ընդ

Հօր եւ Հոգւոյն սրբոյ էութեամբ
եւ անքննութեամբ մերոյին բնու-
թեամբս միացելով, ամենայն եւ
յամենայնում, մի յերրորդութենէն.
Նմա փառք յաւիտենից յաւիտեանս.
ամէն:



Մաղթանք ի դիւաց պահպանութեան նորին
սրբոյն Գրիգորի:

ԲԱՆ ՂԳ.

Ի խորոց արտից խօսք ընդ Աստուծոյ:

Աստուած յաւիտենական, բա-
րերար եւ ամենակալ ստեղծիչ լու-
սոյ եւ յօրինիչ գիշերոյ, կեանք ի
մահու եւ լոյս ի խաւարի, յոյս ակն
ունողաց եւ երկայնմտութիւն տա-
րակուսելոց. որ ամենարուեստ ի-
մաստութեամբ քո՝ դարձուցանես
յայգ զստուերս մահու, աննուազ

ծագումն եւ անմուտ արեգակն. քան
զի ոչ զօրէ ծածկել զփառս տէրու-
թեան քո խաւար գիշերոյ. որում
կրկնի ծունր երկրպագութեան ա-
մենայն եղելոց՝ երկնաւորաց եւ եր-
կրաւորաց եւ սանդարամետականաց.
որ լսես զհեծութիւն կապելոց եւ
հայիս յաղօթս խոնարհաց եւ ընդու-
նիս զխնդրուածս նոցա, Աստուած
իմ եւ թագաւոր իմ, կեանք իմ եւ
ապաւէն իմ, յոյս իմ եւ վստահու-
թիւն իմ, Յիսուս Քրիստոս, Աս-
տուածդ ամենայնի, սուրբդ հան-
գուցեալ ի հոգիս սրբոց միսիթարու-
թիւն վշտաց եւ քաւարան մեղու-
ցելոց, որ գիտես զամենայն յառաջ
քան զլինել նոցա, առաքեա զպահ-
պանողական զօրութիւն աջոյ քոյ
եւ փրկեա զիս յերկիւղէ գիշերի եւ

ի դիւէ չարէ . որպէս զի զյիշատակ
 սոսկալի եւ սուրբ քո անուանդ ,
 միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝
 ըզձութեան շնչոյ , կեցից պահպան-
 եալ ընդ այնոսիկ՝ որ կարգան զքեզ
 ի բոլոր սրտէ : Եւ ի դրոշմէ խաչի
 քոյոյ նշանիդ՝ զոր աստուածային
 արեամբ քո ներկեալ նորոգեցեր ,
 եւ ի նոյն շնորհ որդեգրութեան՝
 զմեզ մկրտեցեր , և ի փառս պատ-
 կերի քո նկարեալ յօրինեցեր . այ-
 սու պարգևօք աստուածականօք ,
 ամաչեցէ սատանայ , քակտեցին
 մեքենայքն , բարձցին որոգայթքն .
 պարտեցին մարտուցեալքն , պա-
 կասեցին զէնքն սայրասուրբ . մեր-
 ժեսցի մէզն , փարատեսցի խաւարն ,
 մեկնեսցի մառախուղն : Բազուկ քո
 հովանացի , եւ աջ քո կնքեսցէ .

վասն զի զթած ես և ողորմած , և
 անուն քո կոչեցեալ է ի վերայ ծա-
 ոայից քոց : Եւ քեզ ընդ Հօր Հօ-
 գւովդ սրբով՝ փառք , իշխանու-
 թիւն և պատիւ , յաւիտեանս յաւի-
 տենից . ամէն :

Աղօթք հարկաւոր իւրսմանչիւր անձանց հա-
 ռասացելոց ի Քրիստոս, զոր տրտեալ է սրբոյն
 Ներսիս շնորհալոյ՝ Հայոց Կաթողիկոսի :

Հաւատով խոստովանիմ և երկիր
 պագանեմ քեզ , Հայր և Որդի և
 սուրբ Հօգի , անեղ և անմահ բնու-
 թիւն , արարիչ հրեշտակաց և մարդ-
 կան և ամենայն եղելոց . ողորմեա՛
 քո արարածոց և ինձ բազմամեղիս :
 Հաւատով խոստովանիմ , և երկիր
 պագանեմ քեզ , անբաժանելի լոյս ,

միասնական սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա՛ ըզմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա:

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զորդիզ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկա՛ւ զիս որպէս զանառակ որդին և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջինն՝ զոր մերկացայ մեղօք. և ողոր:

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան.

խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա՛ զիս որպէս զաւագակն յորժամ գաս արքայութեամբ քով.

և ողոր:

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վեր նատունն, և լուսաւորեցեր զիս մըկըրտութեամբ սուրբ աւագանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. և ողոր:

Մնեզ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քոյ սրբոյ. և ողոր: Տեսող ամենայնի, մեղայ քեզ խոր-

հրդով բանիւ եւ գործով. ջնջեա՛
ղ ձեռագիր յանցանաց իմոց, եւ
գրեա՛ զանուն իմ ի գպրութեան կե-
նաց. և ողոր:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կա-
մաւ եւ ակամայ, գիտութեամբ և
անգիտութեամբ. թողութիւն շնոր-
հեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ
սուրբ աւազանին մինչեւ ցայսօր
մեղուցեալ եմ առաջի աստուածու-
թեանդ քո զգայարանօք իմովք,
եւ ամենայն անդամօք մարմնոյս.

և ողոր:

Ամենախնամ տէ՛ր, զիր պահապան
աչաց իմոց գերկիւզ քո սուրբ ոչ
ևս հայել յայրատ, և ականջաց ի-
մոց՝ ոչ ախորժել լսել զբանս չա-
րութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօ-
սել զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ

խորհել զչարութիւն, և ձեռաց ի-
մոց՝ ոչ գործել զանիրաւութիւն,
և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս
անօրէնութեան. այլ ուզեա՛ զչար-
ժումն սոցա լինել միշտ ըստ պա-
տուիրանաց քոց յամենայնի. եւ
ողոր:

Հուր կենդանի, Քրիստո՛ս, զհուր
սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բոր-
բոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ
զազտ հողւոյ իմոյ, եւ սրբեսցէ
զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ
զլոյս գիտութեան քոյ ի սրտի ի-
մում, և ողոր:

Իմաստութիւն Հօր՝ Յիսո՛ւս, տո՛ւր
ինձ իմաստութիւն, զբարիս խորհել
և խօսել և գործել առաջի քո յամե-
նայն ժամ. ի չար խորհրդոց ի բա-

նից եւ ի գործոց փրկեա՛ զիս . եւ
ողոր :

Կամեցող բարեաց , տէ՛ր կամարար՛ ,
մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ
զնալ . ալլ առաջնորդեա՛ ինձ լինել
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց .
և ողոր :

Արքա՛յ երկնաւոր , տո՛ւր ինձ զար-
քայուլթիւն քո՛ զոր խոստացար սի-
րելեաց քոց . և զօրացո՛ զսիրտ իմ
ատել զմեղս , և սիրել զքեզ միայն ,
և առնել զկամս քո . եւ ողոր :

Խնամո՛ղ արարածոց՝ պահեա՛ նշա-
նաւ խաչի քո զհոգի և զմարմին
իմ՝ ի պատարանաց մեղաց , ի փոր-
ձուլթեանց զիւաց , և ի մարդոց ա-
նիրաւաց , և յամենայն վտանգից
հոգւոյ և մարմնոյ . և ողոր :

Պահապան ամենայնի , Քրիստոս , աջ

քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ
և ի զիշերի . ի նստել ի տան , ի գնալ
ի ճանապարհի , ի ննջել և ի յառնել ,
զի մի՛ երբեք սասանեցայց . և ողոր :
Աստուա՛ծ իմ , որ բանաս զձեռն
քո , և ընուս զամենայն արարածս
ողորմուլթեամբ քով , քեզ յանձն
առնեմ զանձն իմ , զու հոգա՛ եւ
պատրաստեա զպէտս հոգւոյ և մար-
մնոյ իմոյ յայամհետէ մինչև յաւի-
տեան . և ողոր :

Դարձուցիչ մոլորեցելոց , զարձո զիս
ի չար սովորուլթեանց իմոց ի բարի
սովորուլթիւն . և բեւեռեա՛ ի հոգի
իմ զսոսկալի օր մահուն , և զեր-
կիւզ գեհնոյն , և զսէր արքայու-
լթեանն , զի զղջացայց ի մեղաց և
գործեցից զարգարուլթիւն . և ողոր :
Աղբիւր անմահուլթեան , աղբերացո՛

ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեզս անձին իմոյ յառաջ քան զեղանեղն իմ յաշխարհէս . և ողոր: Պարզեւիչ ողորմութեան, պարզեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քոյ հաղորդութեամբ զալ առ քեզ . և ողոր:

Բարերար տէր, հրեշտակի բարևոյ յանձն արասցես զիս . քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխուով անցուցանել ընդ չարութիւն աշտոցն՝ որ են իներքոյ երկնից . և ողոր: Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթեանս արդարոց՝ մինչև յօր

մեծի զալստեան քոյ . եւ ողոր: Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր գատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատատան ընդ ծառայի քում . այլ փըրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա՛ ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ . և ողոր:

Ամէնողորմ տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց . շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց ըզթողութիւն որ առ իս յանցանացն, եւ դարձո՛ զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին . և ողոր: Փառաւորեալ տէր, ընկալ զաղա-

չանս ծառայիս քոյ, և կատարեա՛
լի բարի զխնդրուածս իմ, բարեխօ-
սութեամբ սրբուհւոյ Աստուածած-
նին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ
սրբոյն Ստեփանոսի նախավկային,
եւ սրբոյն Գրիգորի մերոյ լուսա-
ւորչին, և սրբոց առաքելոց, մար-
գարէից, վարդապետաց, մարտի-
րոսաց, հայրապետաց, ճգնաւորաց,
կուսանաց, և ամենայն սրբոց քոց
երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ
քեզ փա՛ռք եւ երկրպագութիւն
անբաժանելի սուրբ երրորդութեանդ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մաղ լեռն+:

Վասն սրբուհւոյ Աստուածածնին
բարեխօսութեանն, տէր, ընկալ զա-
ղաչանս մեր, և կեցո՛՛ զմեզ:


Քարոյ:

Սուրբ զԱստուածածինն եւ զա-
մենայն սուրբս բարեխօս արասցուք
առ հայր ի յերկինս. զի կամեցեալ
ողորմեսցի եւ գթացեալ կեցուցէ
զարարածս իւր: Ամենակալ տէր Աս-
տուած մեր, կեցո՛՛ և ողորմեա՛:

Աղջիւն+:

Ընկա՛լ, տէր, զաղաչանս մեր,
բարեխօսութեամբ սուրբ Աստուա-
ծածնին՝ անարատ ծնողի միածնի
որդւոյ քոյ, և աղաչանօք ամենայն
սրբոց քոց, և ուրոց այսօր է յիշա-
տակ (կամ եւ աւուրս շնորհիւ):
Հո՛ւր մեզ, տէր, և ողորմեա՛, ներ-
եա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեզ ըս մեր:
Արժանաւորեա՛ զոհութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ որդւոյ եւ ընդ

սրբոյ հոգւոյդ . այժմ՝ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն :



Օրհնեալ սէր մեր Յիսուս Քրիստոս ամէն :
Հայր մեր որ յերկինս :

Մաղթանք :

Զհանգստեան զաղօթս և զազա-
չանս ընկալ , մարդասէր Աստուած ,
ի հաճոյս բարերար կամաց քոց . մեր
մեղաց և բազում՝ յանցանացն թո-
ղուծիւն շնորհեա՛ . և քեզ փառք
յաւիտեանս . ամէն :

Փառք քեզ , տէր Աստուած մեր ,
որ պարգևեցեր զօրս զայս բարեաւ
և խաղաղութեամբ անցուցանել :
Մարդասէր Աստուած , զառաջակայ
գիշերս որ ի վերայ մեր գալոց է , ի

մեղաց փրկեա՛ , ի չարեաց ազատեա՛ ,
և ի գործս բարիս առաջնորդեա՛ :
Առաւօտու օրհնութեանցն և փառա-
բանութեանցն արժանի՛ արա՛ զամե-
նայն հաւատացեալս անուանդ քում
սրբոյ , և պահեա՛ ի խաղաղութեան :
Տէր Աստուած մեր , տուր զքո խա-
ղաղութիւնդ ամենայն աշխարհի ,
բա՛րձ զցասումն եւ զպատուհասն
ի յարարածոցս :

Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց՝
կենդանեաց և հանգուցելոց :
Ողորմեա՛ զեկեղեցի շինողաց , ե-
րախտաւորաց , պողատուից , սպա-
սաւորաց , և այնոցիկ որք ընդ հո-
վանեաւ սրբոյ եկեղեցոյ են հան-
գուցեալ :

Տէր Աստուած , օգնեա՛ թագաւո-
րացն քրիստոնէից , և իշխանացն բա-

ընդառաջ, զօրաց և զաւակաց նո-
ցին՝ պահելով ի խաղաղութեան:
Տէր Աստուած մեր, պահեա՛ զա-
ռաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր
ամբողջ և անխռով ի կամս ողոր-
մութեան քո:

Նշանաւ սուրբ և պատուական խա-
չիւ քով՝ հալածեա՛ զերեւելի և զա-
ներեւոյթ թշնամին ի սահմանաց մե-
րոց և ի բնակութենէս մերմէ:
Փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից, և
քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ
Հոգւոյն, երթալք, հանդերուք խա-
ղաղութեամբ, և տէր եղիցի ընդ
ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL032988

